

891.99


7-19



1.542-3

7-20

Ա. ՊԱՅՆՉԱՆ



ԽԵԼԱԳԱՐԻ

ԿՏԱԿԸ

(Փոխադասական մտորումներ)

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵՆԵՏՏՐԱԶԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼԻՑ.

1908

891.99

7-9

48

Ա. ՊԱՅԱԶՈՍ



ԽԵԼԱԳԱՐԻ

ԿՏԱԿԸ

(Փիլիսոփայական մտորումներ)



4297
5797

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԵՐԵՎԱՆԻ ՏՈՒՐՈՒՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՊՈԼԻՑ. 7
1909



I

արոններ, դուք ինձ միք մե-
ղադրիլ, որ այնքան կամ-
քի և բնաւորութեան ուժ-
շունեցայ, որ կարողա-
նայի տանել կեանքի
ծանրագոյն հարւածնե-
րից մէկը՝ ընտանեկան
պայքարը...

Ընտանեկան պայքար... փոթորիկ...

Դուք երևի ծիծաղում էք, մարդիկ...

Ոչ. քսաններկու տարեկան հասակից սկսած,
այդ հարւածի բոլոր անողոք հետեանքները,
կուրծքս դէմ աւած ուղիղ ութ տարի. ես տա-
րել եմ... իսկ այժմ ջղերս թուլանալով և ան-
դորձունէութեան մատնելով առողջ ուղեղիս
Ֆունկցիաները, ենթարկեցին ինձ յաւիտենական
հանգստութեան-բնական մահւան...

Թէև, ինքս եմ կարճում իմ կեանքը և դուք
այդ բնական մահ չը պիտի համարէք, այլ ինք-
նասպանութիւն, բայց միք մոռանալ պարոններ,
որ ամեն մի մահ, ինքը բնութիւնն է առաջ բե-
րում զանազան պայմաններում: Հետեաբար և

այս պայմանը, որի մէջ կատարուում է իմ եղուկ կեանքի դրաման-մահս, դարձեալ նոյն անհոգ բնութեան անողոք հարւածներից մէկի հետեանքն է, առողջ ուղեղիս գործունէութեան թուլացումը...

Ասածներս հասկանալու համար, փիլիսոփա կամ հանճար չը պիտի լինել, այլ միմիայն ինձ նման թշուառ, որ երջանիկ մարդիկ սառն և անփոյթ դատելով ինձ խաչ հանելիս՝ այդ յիմարտարմունքիս համար, խօսքի փոխարէն, արցունքի մի գոյգ դառն կաթիլ գլորի կու գնացած պղտոր աչքերից դէպի թարշամած սյուները և զգայ տանջանքիս մեծութիւնը...

Ես սրանով ինձ չեմ ուզում արդարացնել, որ մեր արժաթապաշտ հաւատալէզ հոգևոր հայրերը տանեն իմ դագաղը աստուծային խանութը, ապա ժամ պատարագով թաղեն ինձ... Ոչ, կամ մահիցս յետոյ ինչ օգուտ ինձ, թէև հէնց ինձ մի անմեղ հրեշտակ կամ նահատակ համարէք, բայց ուզում եմ ասել պարոններ, եղէք հեռատես, ստեղծեցէք ընտանեկան և տնտեսական մի այնպիսի կոմբինացիա, որ ինձ նմանների թիւը նւազի...

Ձե՛ որ ես չեմ մենակ. չէ՛ որ մեծամասնութիւնն է այս փշոտ ու տատասկոտ ուղիով քայլում...

Դուք երևի ծիծաղում էք...

Ձեր շուրջը նայեցէք...

Շարան, շարան քայլել են, քայլում են և պիտի շարունակեն քայլել. քանի որ դուք երջա-

նիկ պարոնների, կառաջնորդէք դարաւոր ամբոխի տրամաբանութիւնով...

Ուտօպիստ մեծ սօցեալիստը, որին՝ քարացած մտքի իշխանութեան գերի մարդիկ Աստուած են անւանում, ամուսնական խնդիրը, այդ դօրեան հանգոյցը, դժբախտութիւնների այդ հոծ շարանը աւելի ջրտեց ու դրեց մարդկային երկու սեռն էլ տաժանելի դերութեան մէջ...

Սակայն իմ միտքս, թռիչքներով սաւառնող այդ Աստուածը, այստեղ դաւաճանում է այդ մարդուն և ասում է. Նա կատարեալ մարդ էր... Նա աշխատեց ղնել մարդկային նեխող ճահիճ կեանքը հարմոնիայի տակ, եկաւ լրացնելու և ոչ թէ քանդելու...

Լրացնելու...

Ուրեմն կարկատելու...

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Կարկատած մարդիկ...

Եւ նա կարկատեց, չը փշրեց կոռ. շղթան, մարդկային քարացած մտքի վերջին հանգոյցը, այլ կոնց ու կոփեց և մի սոսկալի նզովքով պարսպեց այդ շղթան... Նա աշխատեց սրբել խեղրըսպեց այդ շղթան... Նա աշխատեց սրբել ձրկճի արցունքը՝ առաքեալներ դարձրեց բոքիկ ձրկճի նորաներին և նրանց ուռկաններով սկսեց վճիտ ծովում մարդ որսալ, բայց մարդկային խմորէւած այդ ծովը լեղի դարձաւ...

Թշուառ մարդիկ, սթափւեցէք մտքի քնից... Քարացած մտքերի քաօսի մէջ ձեզ խճճել

են, ձեզ նման, բայց հզօր մտքի տէր մարդիկ, մահից յետոյ էլ ապրելու համար... Եւ նա ապրում է... Իսկ դուք խարխափում էք նրա ստեղծած քաօս խաւարի մէջ...

Երևի դուք ծիծաղում էք տարօրինակ կտակիս վրայ...

Ես էլ եմ ծիծաղում, երբ տեսնում եմ, որ ամենքդ էլ կոյր էք... Այո կոյր, ձեր մտքի տհասութեամբ...

Ես յիշում եմ, որ մի օր հայրս ու մայրս ասացին ինձ: «Որդեակ, մարդիկ ի՞նչ կասեն, երբ դու կը թողնես կնոջդ...»

Ձգացի իսկոյն, որ մարդիկ ինձ պիտի անւանէին փուշ, աննամուս, գեխ, ցոփ, անբարոյական, անառակ, իսկ Յիսուս Աստուծոյ ասածը արդէն բոլորդ գիտէք...

Ու ես լռեցի: Առաջնորդւեցի ամբօխի տրամաբանութիւնով... Զուգեցի, որ մարդիկ ինձ այդպէս անւանեն... Այո լռեցի. իսկ այսօր՝ յաւիտեան...

Այնտեղ, ուր արեւու երկինքը իր շիկացած ճառագայթներն է մխում վառւած ու բոցով բռնկւած աւազի մէջ, տարրերային այդ բոսորային կրակէ բովի կարմրած ծոցից ծնւեց սրի և կրակի մարգարէն—Մահամմէդը և զառնեց այդ հրդեհ երկրում ապրողների թոյլ երակին... Զէննաթը՝ հօւրիններով ու փէրիններով, գաղափարի ծաւալում՝ հրով ու սրով և նա նախորդ մար-

գարէներից վճռեց մի քայլ առաջ անցնել, կապել իր բոլոր դոգմաները սօցեալ կեանքի հրամայողական պահանջների հետ, նոյն իսկ ամուսնական կնճռոտ խնդրում, և նա անցաւ. սակայն արած քայլը դժբախտաբար, էգօիստական էր, միակողմանի և միատիքական:

Եւ նա իրաւունք ունէր...

Նա ամբօխի հետ գործ ունէր...



II

Դուք անպատճառ ծիծաղում էք վրաս... Երևի ինձ խելագար համարում, որ մտքի այսպիսի յիմար թռիչքներով անկապ և անմիտ կտակ եմ գրում և ոչ մի գումար չեմ կտակում զանազան բարեգործական հիմնարկութիւններին, մահից յետոյ էլ մի որոշ ժամանակ ապրելու համար...

Սակայն եկեղեցուն, տէրտէրների այդ խանութին հարկաւոր է անշուշտ, որի մէջ դարերից ի վեր, մեզ նման մարդիկ, մեր զանգերն են

դարձնել, կթել մեզ, ճարպակալել, իբր մեզ դէպի լոյս առաջնորդել...

Դէպի լոյս...

Հա, հա, հա, հա...

Այդ մի գէնք է նրանց համար գոյութեան կռուում...

Գոյութեան կռիւ...

Եւ գտնւեցան ճարպիկ մարդիկ. հողու վրայ իշխանութիւն հաստատեցին, արքայութեան բանալին ձեռքն առան, ապրեցին, ապրում են և կապրեն, քանի դուք պարոններ, մտքի մի նոր թռիչքով չէք վերածնւել...

Իրաւունք ունիք, որ ինձ խելագար անւանէք... Ուստի այդ է պատճառը, որ մարդիկ ստեղծել են երկու սոսկալի ու սարսափելի բաներ...

Թշւառ, և երջանիկ...

Թշւառ էք մարդիկ...

Թշւառը՝ ես արդէն հասկացել եմ... Երջանիկը՝ ուղիղն ասած չը գիտեմ. ինչ հասկացողութիւն է...

Միթէ այդ էլ Թշւառի պէս բան չէ...

Ծիծաղում էք...

Խնդացէք երջանիկ թշւառականներ, բայց իմացէք, իւրաքանչիւր մարդ իր զգացածովն է չափում աշխարհիս մէջ գոյութիւն առնող բոլոր երևոյթները...

Երջանիկ...

Ախ, գուցէ հէնց այդ ես ինքս եմ այս ար-

ցունքի ծովում... Ուրեմն զուր եմ դիմում ինքնասպանութեան: Հետեաբար վճիռս խելագարութիւն է...

Հա, հա, հա, հա...

Ես իսկոյն կանչեցի իմ մտերիմ ընկերներին և ասացի նրանց: Ընկերներ, ես ահա խեղդւում եմ արցունքի ծովում... Պատուել է կեանքիս նաւակը. այդ նաւակը կարկատելով՝ կարող եմ անցնել այս ահագին օվկիանոսը, որ յաջող պայմաններում 80-90 տարւայ ճանապորհութիւն է...

Նրանք ծիծաղելով վրաս, երևի խելագար համարելով՝ իսկոյն պատուածքը պնդացրին մի կերպով:

Դարձեալ կարկատւածք...

Մարդ, միթէ կարկատանն էք ու կեանքը...

Թիավարել սկսեցի: Թիավարեցի ուղիղ ութ տարի և ընկայ աւելի մեծ փոթորիկների մէջ ու խղճալի նաւակս պատուեց անյոյս կերպով...

Սոսկալի դրութիւն...

Ձեզիտէի օվկիանոսի ո՞ր մասումն էի գտնւում: Կողմնացոյցս էլ բոլորովին փչացել էր. էլ չէր գործում...

Որոտում էր հանդ փոթորիկը:

Պատառոտւում էր երկինքը:

Ոռնում էր երկիրը...

Ձը կար ոչ մի ընկեր...

Ախ, մի օգնութիւն...

Նաւակս խորասուզեց ու անյետ կորաւ

մանչող ծովի փրփրադէզ ալիքների անդունդա-
սև որկորի մէջ...

Ոչ ոք չիմացաւ այդ...

Արդեօ՞ք, նաւակս կարկառողները գոնէ
այժմ հասկացան իւրեանց տմարդի սխալը...

Ես խնդրում էի նրանց: Պարոններ, մի կար-
կատէք իմ նաւակս... Թոյլ տւէք նա ձեր առջև,
ձեր ներկայութիւնով խորտակւի և խորասուզւի...

Նրանք չուզեցան սրտաշարժ տեսարան տես-
նել և արցունքի մի գոյգ շիթ գլորել...

Կարկատեցին, որ չը տեսնեն իմ տառա-
պանքը...

Ա՛, ուրեմն երջանիկները չէն սիրում ար-
ցունք թափել...

Ա՛խ, հէնց մի գուցէ լալ չը գիտեն...

Թշւառ...

Երջանիկ...

Արնարբու թշնամիներ...

Ուրեմն սիրելի ընկերներ, գուք իմ թշնա-
մին էիք...

Սա՞նք մարդիկ...

Էգօրիստներ...



III

ատարւեց սոսկալի գրաման... Հո-
սեց կարմիր արիւնը... Թշւառ-
ների շարքում հողի մի սև թումբ
և՛ս աւելացաւ...

Ծիծաղեցէք պարոններ, դի-
ւային հոհոցով...

Չը կայ թշւառը... Նա այլ ևս
չի շարժւում...

Բայց լաւ գիտցէք, այն տանջանքը չէք
կարող ջնջել կռկռոցով...

Նա կենդանի է իր տանջանքի մեծութեամբ...

Թւում է ինձ, թէ ես հանգիստ պառկած եմ
մի նկուղի մէջ:

Սև խաւարն է չորս բոլորս թագաւորում...

Սե՛ հողի խաւար...

Սև խաւար, կոյր խլուրանների ա-
մենաջերմ սիրածը...

Չորս կողմս սև հողի պատերն էին բարձ-
րանում... Սե՛ հող... Եւ նա ինձ ճնշում էր...
Այստեղ էլ կոխւ էր... Ես իմ գազերով մարտնչում
էի սև հողի հետ... Նա բորբոսնել էր... Սակայն
նա ինձ ճնշում էր ու ճնշում...

Ա՛հ, որքան նման է այս կեանքը երազի...
Երա՞զ...

Հա, հա, հա, հա...

Եւ ձեր կեանքը երազ է պարոններ... Եղբորդ տաք արիւնը ծծիր ագահ տղորուկի նման, ծծիր անխնայ, մինչև որ կը գլորւես հոտած ցեխի մէջ... Ճահճում, գորտերի այդ թագաւորութեան մէջ, դու կը նիրհես մի անուշ քնով, և երջանկութիւնը իր գիրկը կ'առնի քեզ...

Մի տեսակ մանր կենդանիներ, որոնց ստեղծողը ես էի, հետևաբար և նրանց Աստուածը, որոնք մի ժամանակ ոտքերիս տակին էին տրորւում, սկսեցին ջղերս գրգռել, խողտել ու ծիծաղեցնել ինձ...

Օ՛, սակայն Ռալֆի յեզնութիւն կար այդ ծիծաղիս մէջ...

Ծիծաղել ամբողջ էութեամբ...

Փթե՛լ—Ապրել... Նեխե՛լ—Կենդանանալ...

Եւ իմ նոր ընկերները օրօրում էին ինձ յաւիտենական օրօրով...

Գանգիս մէջ բոլն դրին խոհուն որդեր...

Սոսկալի վիճակ, բայց սքանչելի...

Մարդկային ժառանգական սեփականութիւնը նեխում էր...

Տկար էր կորովի միտքս... Նա անգոր էր, իր ստեղծած այդ հասարակ, այդ ողորմելի որդերի դէմ...

Նա չէր կարողանում նրանց հալածել։ Օ՛, ինչ անեզ ուժ էր ստացւում նրանց միութիւնից...

Ես բազմանում էի նոր տեղակի բեղմնաւորումով...

Այ քեզ հրաշք... Արու և իգի օրէնքը չըկար այստեղ...

Իմ ստեղծած խոնաւ մթնոլորտում, միմիայն արուններն էին ստեղծագործւում... Եւ դու մարդ, չես կարողանում մինչև այսօր արու և իգի օրէնքը գտնել... Որոնիր այդ գաղտնիքը խոնաւութեան մէջ... Բեղմնաւորութիւնը փորձիր խոնաւութեան զանազան աստիճաններում ևսնունդի առատութեան և նւազութեան մէջ...

Հա, հա, հա, հա...

Զը լինի՞ր ամենքդ իմաստանաք և գլորւէք ծովի խոնաւ յատակը...

Ուղեղս ու ջղերս ինձնից բաժանւելով սողացին սև հողի ծալքերի մէջ ու ես մնացի մեռակ, բոլորովին մերկ...

Այո, այս նկուղի, այս հողապատ բերդի մէջն էլ ընկերներս դաւաճանեցին ինձ...

Ա՛խ, թէ ազատէի այս յաւիտենական սև բանտից...

Բանտ... Եւ դու սողուն, պարծենում ես քո հանճարի վերջին թռիչքով, ծծում ես քեզ նմանների կարմիր արիւնը և հրամայում ես լռել, ցաւին դիմանալ, իսկ չըդիմացողին քո արեան իշխանութիւնով դէպի այդ խաւար բանտերն եծ՝ ճանապարհում, մեռցնում նրա մէջ ինքնապաշտպանութեան և ազատութեան վերջին կայծը, զազանային լպիրշ հայեացքով սարսափ տարա-

ծելով չորս բոլորդ և դարձեալ ծծում խեղճի արիւնը... Սարսափելի իրականութիւն... Միթէ այս ամբողջ տիեզերքում չըկայ մի ազատ անկիւն... Գուցէ այն յիմարի նման ճպճալող աստղերի վրայ...

Ցանկութիւնս իրագործել չը կարողացայ: Հնար չը կար ազատութեան...

Ազատութիւն, ազատութիւն... Եւ միթէ այդ գոյութիւն ունի տիեզերքում... Եւ դու բթամիտ մարդկութիւն, իբր դու տենչում ես ազատութիւն...

Ազատութիւն... Թոյլերի համար՝ վիշապ ամեհի, Հոգորների համար՝ մի բուռն ոսկի...

Եւ դուք, փշուր հացի համար սողացող արարածներ, այդ ազատութեան միայն այն ժամանակ կարժանանանք, երբ հանուր մարդկութեան ստամոքսին կը սիրանաք:

Ստամոքս, բնութեան սոսկալի սխալը...

Ուղղեցէք այդ սխալը, գտէք մի այլ կերակուր...

Կերակուր, ահա այն հանգոյցը, որ հանդիսանում է մայր բոլոր չարիքների, զրկանքների և անհաւասարութեան...

Կերակուր, ահա այն ահուկի հնոցը, ուր կոփւել է, կոփւում է և պիտի կոփւի մարդկութեան հասարակ մեխանիզմը և բարդի սարսափելի կերպով...

Հա, հա, հա, հա, և հողի ծալքերում այդ չարածին ստամոքսս, նոր նոր ստամոքսներ ծնելով նեխեց, փլեց, անուշ խորտիկ դարձաւ և

ինքը չքանալով՝ նոր ստամոքսների կատաղի կուռ պատճառ դարձաւ...

Գոյութեան կուռ գերեզմանիս մէջ...

Ստամոքսները իրար լափելով ոչնչացան և ծծւեցին հողի մէջ և կշտացրին հողը...

Օ՛, թշուառ մարդկութիւն, քանի ստամոքսդ գոյութիւն ունի, դու մի որոնիր հաւասարութիւն, ազատութիւն, արդարութիւն, այդ ամենը ցնորք պիտի մնան, մինչև դու քո ուղեղի թռիչքով չես ստեղծագործի մի այնպիսի նոր կերակուր, որ անսպառ լինի որպէս հող և անհատնում որպէս օդ...

Մտածող հանճարներ, գտէք ստամոքսի այդ բանալին... Գտա՞ք, աշխարհը կը դառնայ դրախտ սիրոյ փշերով...

Միք ծիծաղիլ պարոններ, այդ սիրոյ փշերով... Եթէ կայ գոյութեան կոփւել, կայ և սիրոյ խանդավառ կոփւել...

Ահա, թէ այդ բոլորը կատարւէր...

Կատարւէր...

Տեղիցս մի մազ անգամ շարժել չը կարողացայ պարոններ: Կեանքս յաւիտենական անշարժութիւն էր... Այդպէս էլ պէտք է լինէր: Եթէ շարժուում եմ, ուրեմն ապրում եմ, եթէ ապրում եմ, ուրեմն սողում եմ... Օ՛, միթէ ամեն մի սողուն ապրում է...



IV

ի օր սոսկալի բանտիս հողէ պատերը փլեցին... Հրաշք...

Ո՞վ էր այս բարիքնկերը...

Ես լողում էի ջրի մէջ...

Սարի գետակը իր հունը փոխելով եկել փորել էր բանտիս պատերը և ինձ ազատել յաւիտենական անշարժութիւնից...

Հա, հա, հա, հա... Շիրիմիս չորս բոլորը կոտորած փշուր փշուր խէցիներից արձան էին կանգնել ինձ... Տղէտ մարդիկ, միթէ անձնասպանի գերեզմանը սպեղանի կարող է լինել ձեր ազիտութիւնից բղխող ժահրոտ վէրքերին... Կոյր մարդիկ, ձեր փրկութիւնը գերեզմանիս վրան էք որոնում... Եղկելիներ, ծէսերից բնաւ փրկութիւն միք յուսաւ... Ապրեցէք և մահից յետոյ... Օ՛, դուք ծնած օրիցն էք մեռած... Դուք չէք ապրում... Դուք սողում էք...

Գետակի մէջ լողում էի ազատ ու համարձակ։ Բնութեան ոչ մի արհաւիրք ինձ համար այլևս սարսափելի չէր...

Միթէ... Առաջին անգամ սակայն ինձ այդպէս թւաց։

Ճշմարիտը՝ ես այժմ խաղալիք էի...

Լողում էի... Օ՛, ծանր հարւած... Յանկարծ՝ ես բոլորովին բաժանեցի մանր մասերի և իւրաքանչիւր կտորս սկսեց լողալ ինչպէս ուզում էր, ազատ, իր կամքին։ Մենք հետզհետէ բաժանւելով, իրարից բոլորովին հեռացանք և այնուհետեւ էլ միմեանց չըհանդիպեցինք...

Գանգս ինչպէս մի վիթխարի զրահակիր, լողում էր մեն-մենակ, անվախ, համարձակ...

Մէկը գետի քրքրւած ափից կրակեց ինձ և վրաս նետւած զրանատը ուղիղ առաւ գանգ— նաւակիս աջ կողքին և ես խորասուզեցի... Դրանք չարածճի երեխաներ էին մի քանի մեծերի հետ, որ նետած քարով նորից դժբախտացրին ինձ... Ջուրը իսկոյն լցւելով մէջս, սկսեց լւանալ այն տունը, ուր ծնւում եմ ու սնւում բարին ու չարը, ու մաքրել բանտից այնտեղ մնացած յիշատակները— սև հողի կտորները...

Հաւաքւեցին չորս կողմս մեծ ու փոքր ձկնիկներ ու սկսեցին ինձ քննել, բայց վրաս ոչինչ չըգտան իւրեանց ոտամոքսի համար... Մեծերը՝ օգուտ քաղելով դէպքից, սկսեցին փոքրիկներին կլանել, բայց վերջիններս արագ հեռացան և թագնւեցին, որ մեծանան և մի օր էլ իրանք կլանեն իրենցից թոյլերին...

Օ՛, միթէ այդչափ էլ անօգուտ էի...

Մեծ ձկները ինձ չարչարել սկսեցին, իրար գլխով անցան, կուեցին, բայց մի մարդ իսկոյն ինձ փրկեց։ Նա ինձ հանեց ջրի յատակից։

1001
3280

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
1922
ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Ախ, որքան լաւ էր ազատ օդի մէջ...

Գարունն էր կարծեմ, բայց թէ ո՞ր թւականի, այդ ասել չեմ կարող, որովհետեւ բանտիս մէջ գրաքննիչները թոյլ չէին տալիս օրացոյց պահելու... Ինձ ազատողը տարաւ իր փոքրիկ ընկերների մօտ և սկսեց պատմել:

«Տեսնո՞ւմ էք, սիրելի աշակերտներ, այս մարդու գանգը, որ մի քանի բոլորէ առաջ քարով խփելով ջրի մէջ սուզեցիք... Սրա քունքի և գագաթի ոսկրերի չափը ցոյց է տալիս, որ այս մարդը թէև մեծ ուղեղ է ունեցել, գուցէ կամքի մեծ ուժ և տյն, բայց ոճրագործի գանգ է. հաւանական ինքնասպանի կամ մարդասպանի գանգ».

Եւ նա սկսեց բացատրել...

Բողոքել էի ուզում... Բայց ի՞նչպէս...

Չէ՞ որ ես մերկ էի... Եւ պատասխանս լռութիւնն էր...

Լռութիւն... Օ, քանի տեսակ տանջանք ես ներփակում...

Լո՛ւր թոյլ... Լռութիւնը քո Աստուծո՞ւն է...

Կոփւի՛ր այդ լռութեան մէջ ու դարձի՛ր մնջութեան զանգւած...

Նրանք համոզւած իւրեանց կարծիքի մէջ, տարան ինձ ու պահեցին մի պահարանում, որտեղից երբեմն ինձ վերցնելով վերոյիշեալ ձևով պատմութիւններ էին անում ու ծաղրում...

Օ, այս գերութիւնն աւելի սարսափելի էր, չընայած ինձ շատ խնամքով էին պահում: Եւ ինչո՞ւ խնամքով չը պահէին, քանի որ ոչ մի

պահանջ չէի դնում նրանց առաջ: Ոչ ուտել էի ուզում, ոչ խմել, իսկ իմ մասին անարդարութիւններ խօսելիս՝ լռու էի ու մունջ...

Մնջութիւն... Թոյլերի միակ զէնքը...

Փշրեցէք այդ զէնքը թշւառներ... Միևնոյն է ձեզ փշրում են ու ծիծաղում... Ապրել էք ուզում, բայց ձակատով դուրս եկէք մարտի ասպարէզ...

Սարսափելի չէ տառապանքը, երբ ամուր է կամքը...

Մեռի՛ր գիտակցօրէն...

Եւ դու կ'ապրես...



ի անգամ սկսեց մի ինչ որ փափուկ բան լիզել ինձ: Ես սաստիկ տաքացայ ու մեծանալ սկսեցի...

—Ախ, չը լինի՞ թէ ապրում եմ...

Թանձր բայց զալարուն մի սև բան լցւելով տունս, սկսեց ինձ խեղդել: Երկար ինձ չարչարեց, բայց լափող կրակէ շիկացած սուր լեզուները

ազատեցին ինձ այդ տանջանքից և դարձրին ինձ բոլորովին փոշի, մանր, շատ մանր... Երկիւղը նորից ինձ պաշարեց: Ես նորից կարող էի ենթարկւել բաժանման...

Կատարւեց...

Տւաւ քամին և շող տւաւ ինձ օդի մէջ: և զանգիս մոխիրը զատւելով իրարից էլ չը միացան յաւիտեան... Նրանք սկսեցին օդի մէջ անվերջ սաւառնել... Քամին քանի ուժեղանում էր, նրանք աւելի էին հեռանում իրարից և յանկարծ ես մեծ մասնիկս յետ մնացի և բոլորովին մնացի մենակ ու քամին երկար պտտցնելով ինձ օդի մէջ, կայծակի արագութեամբ ներս տարաւ մի հոյակապ պատուհանի միջով մի հոկայական դահլիճ: Օ՛, որքան շքեղ էր այդ դահլիճը... Այդտեղ հարսանիք կար: Իսկոյն յիշեցի հարսանիքս: Ուղեցի սրտանց լաց լինել... Բայց որտեղ է սիրտս... Նա լողալով արցունքի ծովում, հողի ծալքերում հիւժւեց, հողի հետ միացաւ: առուն տարաւ այդ հողը դաշտերի մէջ թոզեց, վրան խոտ բուսաւ, կերաւ այդ խոտը գառնուկը և այդպիսով նորից իմ մասնիկը-հիւթը ծծւեց քո սրտի մէջ և այդպէս անվերջ...

Մարդ, ահա քո հոգին և այն արքայութիւնը, ուր մահից յետոյ քեզ խոստանում են Աստուծոյ ընտրեալները...

Քամին ինձ տարել էր ձգել երաժշտի թառի կոթի վերին մասը: Նա նւագում էր ասիական տարփալից եղանակներ, իսկ երգիչը ասիա-

ցուն յատուկ կլկոցներով նւիրագործում երգը... Ամենքը ուրախ էին ու ժպտուն...

Օ՛, միթէ չը կայ դրանց մէջ այն թշւառը...

Սակայն նրանք բոլորը խմում էին կարմիր հեղուկ: Խմում էր և երաժիշտը. և երբ վերջինս ցանկացաւ մի բաժակ ևս խմել, յանկարծ ես ընկայ այդ բաժակի մէջ... Ես արգէն նորից էի լողում: Սարսափելի վիճակ: Ինձ կուլ պէտք է տային... Սակայն որքան ցանկալի էր, որ ինձ կլանէր նորահարսը կամ փեսան...

Ինչպէ՞ս յայտնեմ ցանկութիւնս...

Այդ միջոցին, չը գիտեմ ինչպէս, մի պարոն ինձ նկատեց բաժակում լողալիս և մատի ծայրով վերցնելով թափ տւաւ յատակի վրայ: Ազատէի փորձանքից... Բայց աւանդ, ամենքն սկսեցին հերթով ինձ կոխ տալ:

Մարդ, եթէ դու իմանայիր, մի օր էլ քեզ էսպասում այս վիճակը... Կոխ տուր անգթաբար, հոգ չէ, դու գոլցէ ճահճի մէջ ընկնես և գորտերի խորտիկը դառնաս և յաւիտեան նեխւես ճահճի մէջ...

Անիծում էի երաժշտին, որ քիչ առաջ զմայլւած էի: Նա ոգևորել էր ամենքին և նրանք պարելով կոխկուտում էին ինձ...

Պարոններ, տիկիներ, կապիկները ամաչում են... Դուք գերազանցել էք նրանցից... Եւ իրաւունք ունիք. չէ՞ որ դուք էլ էք կապիկներ և այդ ձեր կապկութիւնը գեղարուեստ դարձրիք...

Նազելի տիկիներ և օրիորդներ, սիրեցէք

այդ գեղարւեստը շարժեցէք մննորը, այդ միջոց է, որով կը հասնիք սիրոյ կատարելութեան և Յիսուի սիրով կը սիրէք միմիանց անխտիր, ինչպէս նա սիրեց Սամարուհուն և նրա աստածային հոգին այդ ընկած կնոջ վերածնութեամբ կշտացաւ...

Սակայն ես ցաւ չէի գգում: Կարմիր հեղուկը ինձ անզգայ էր դարձրել: Ա՛հ, ահա թէ հրաւեր է թագնւած կայծը... Ահա թէ ինչո՞ւ ամենքը երջանիկ էին... Ուժը այդ հեղուկի մէջն էր...

Օ՛հ, հրաշագործ հեղուկ...

Օ՛հ, նեկտար գինի—

Ինչո՞ւ ես էլ քեզ չապաւինեցի...

Թշառականներ, թունաւորեցէք ձեզ... Արհեստական միջոցով մեռցրէք վիշաք... Ա՛խ, թէ դուք վիշաք վշառով բուժէիք... Միևնոյն է կեանքի գաղտնիքը երջանկութիւնը չէ, այլ վսեմ խելագարութիւնը... Այո, երջանիկ է խելագարը... Ծիծաղում էք...

Վա՛տ մարդիկ... իսկ գիտէք, ինչ է ծիծաղը... Խելագարի սրտի արցունքը...



VI.

արասնիք եկածները լուսաբացին ցրւեցին: Ես մէկի ոտին կպած ճանապարհորդել սկըսեցի: Տէրս գնում էր տաճանուելով, պատից պատ, ծառից ծառ կպչելով... Նրա տրամագրութիւնը հիանալի էր. և նա երգում էր ոգևորւած: Նա կոհնեց մի փառաշէն դռան մօտ և էլէքտրական զանգը հպեց:

Ծառան բացեց դուռը: Մարմարէ սանդուղաներով բարձրանալով մտայ մի հիասքանչ ննջարան: Փարթամութիւնը, ճոխութիւնն ու շքեղութիւնը թագաւորում էր այդտեղ: Երևում էր, որ դոյութեան կռիւր պարոնի համար ոչ մի նշանակութիւն չունէր: Նա անհրաժեշտ զէնքը ձեռք էր բերել...

Պարոնս երջանիկ էր... Ա՛խ, մի՞թէ ոսկին երջանկութիւն է... Ողբացէք ոսկի չունեցող մարդիկ, մագլցէք ապագած ժայռերը... Ոսկի որոնեցէք... Ներկեցէք աշխարհը կարմիր արիւնով... Ոտի տակ տւէք ամեն ինչ... Ծախեցէք ձեր պատիւը, հարազատին, բոլորը, բոլորը երջանկութեան բանալի—ոսկի ձեռք բերելու համար... Օ՛հ առաջ, առաջ...

Ա՛, ահա թէ ինչո՞ւ ինձ խելագար են
անւանում...

Ես ոսկին որոնում էի մարդկանց սըր-
տերում...

Այդ շքեղ ննջարանում, ոսկեփայլ մահճի
վրայ պառկած էր մի հերարձակ կին սևաթոյր
բոյլ բոյլ գալարւած մազերով... Իսկոյն կնոջս
յիշեցի... Երանելի՛ կին... Գոնէ մահիցս յետոյ
դու գտնար հանգիստ... Նա քեզ սիրեց... Ըն-
կեր ես, ասաց. իսկ դու նրան միս վաճառեցիր...

Կանայք, կանայք, ինչո՞ւ սէրը մտավաճառի
խանութ դարձրիք...

Նա խորը քնած էր: Նորա փափուկ վայել-
չակերտ կուրծքը, որի վրան հանգչում էին մի
զոյգ քուլա ամպի նման սպիտակ ստիւքներ,
ազատ օդի մէջ բարձրանում էին և իջնում...
Նա շնչում էր շատ հանգիստ... Դէմքը սևաթոյր
մազերի միջից՝ լրացած ծագող լուսնի վեր նման
սև սև ամպերի տակ բացխուփ սահելով...

Օ՛, այդ չքնաղ դէմքը, միթէ նորա ներ-
քին աշխարհի հայելին չէ... Օ՛, այդքան շքեղ
կուծքի մէջ, միթէ մի աննման սիրտ չէր բա-
բախում: Նա քնած էր անուշ... Որոշելու հնար
չրկար: Մի՛խ, երանի, այդ դիցունհին միշտ քնած
մար, մեղմ ու հանդարտիկ, անուշ ու քաղց-
րիկ... Օ՛, ես նորան կը սիրէի նեկտար սիրով,
կը պաշտէի անհուն հաւատով...

Ներհեցէք կանայք անուշ շրշիւնով...

Օ՛, դուք մարդկային կեանքի անիւը կը

պտտէք դէպի երջանկութիւն... Ուր այլ ևս չի
լինիլ տանջանք ու արցունք, ուր մարդ գաղանք
կրվերածնւի և սիրոյ արշալուսի ցօղած շիթերի
մէջ կը փափկի նրա կոպիտ ու քաղ սիրտը...

Մի՛խ, միթէ սիրել անխօս, անլեզու կանանց...

Օ՛, լեզու, լեզու, դու գանձ ես անգին,

Օ, լեզու, լեզու, պարզ և երկնային—

Դժբախտ աշխարհին, երբ սէր ես երգում...

Անէծք գեհէնի՛ երբ թոյն ես ժայթքում...

Սէր...

Օ՛, սէր... Միթէ...! Սէր... Սէր այս աշ-
խարհում...

Սէր էգերի և արունների...

Մի՛խ, և այդ կայ անասունների մէջ...

Անասուն մարդիկ...

Խոզեր...

Ճահիճ...

Ոչ, ոչ, այս ի՞նչ եմ բարբառնում... Ձե՛ որ
դու մարդ, կատարելագործւել, առաջագիմել
ես... Թշառ հողագնդի ողջ գաղանների կատա-
րելատիպն ես—պարծանքի պսակը... Ստեղծա-
գործող հանճարի մտքի վերջին թռիչքը... Անա-
սունների՛ն՝ բեղմնաւորումն է, բնական պահանջ...

Իսկ քոնը...

Հա, հա, հա, հա...

Սէր, սէր, սէր է իդէալական...

Օ՛, նա չէ կիրք անասնական...

Սէր... Սէր...

Կին... Երկնային հարս... Դու բեղմնաւոր-

Լուսմ ծնում ես մտքի երկունքով... Դու անա-
րատ ես... Դու անասունների մէջ բացառիկ տեղ
ես բռնում, ինչպէս «Մեծ կոյսը» քո նկատմամբ...
Պարծեցիր կին, երկնային հարսով... Նա կին
էր... Հարս էր երկնքի, և ծնեց երկնքի որդին
մնալով «սուրբ կոյս»... Նա ծնեց հանճար, ու
մնաց հանճար...

Հա, հա, հա, հա...

Թշուտ մարդկութիւն, միթէ չես խեղդւում...

Հաւատացիր...

Հաւատալ...

«Բո հաւատը քեզ կապրեցնի»...

Հաւատում եմ...

Եւ ահա ես ապրում եմ լուսնի վրայ... Օ՛,
ինչքան լաւ է... Հանգիստ է ու անդորր... Մըշ-
տընջեանկան լուսթիւնն է այստեղ թագաւո-
րում... Սյստեղ «մի հօտ, մի հովիւ է»...

Դուք չէք տեսնում...

«Թերահաւատներ»...

Հաւատացէ՛ք, դուք էլ կը սլանաք ինձ մօտ...

Հաւատացէ՛ք...

Եւ կը տեսնէք լուսնի վրայ գտնւող հսկայ
լեռներն ու ժայռերը կը բարձրանան ձեր սա-
րերի վրայ ու յաւիտեան կը մեռնի ձեր աշխար-
հում չարութեան ոգին...

Հա, հա, հա, հա...

Խլուրտներ, դուրս սողացէ՛ք ձեր որջերից...
Գոնէ միանգամ նայեցէ՛ք և տեսէ՛ք լոյսին... Ու-
ղորմելի մարդ... Գեղեցիկ վրձինով ծեծիր ջուրը,

փրփրացրու, ծիածանագոյն փամփշտիկներ ստեղ-
ծիր, որ կրակ արևի հրամազ շողերի մէջ փայ-
լեն, պսպղան նուրբ ու շքեղ պէսպէս գոյներով,
քեզ գլորեն միստիքական երազների աշխարհը,
հետևանքը՝ դարձեալ ջուր...

Միամիտ...

Յիմար,—խորամանկ...

Շղթայւած գերի...

Սթափւիր խոր քնից...

Խելագարւիր...

* *

Ինձ տուն բերածը, այդ խորը նիրհող թու-
շուշուրիկ արարածի ամուսինն էր:

Ամուսին...

Սարսափելի բառ... Սոսկալի պաշտօն...

Յօժար կամքով կեանքի տականքը լպստող
պարոն...

Ոչ, ոչ. մի զոյգ ամուսնի կեանքի պայքա-
րում, փարիսեցիներ սիրոյ տաճարում, հասարա-
կութեան մէջ պերճ դիմակներում, դուրսը՝ սո-
խակներ, վարդի երգիչներ, ներսը՝ մթասէր
բրդոտ քօռ բուեր, իրարից ծածուկ՝ նեխած
տականքներ,—ահա ձեր դերը, ամուսին զոյգեր...

Ամուսիններ...

Եւ ամուսինը հանւեց շատ զգոյշ: Կա սփը-
սափում էր կարծես մի բանից... Այո, նա չէր
ուզում խռովել սիրած արարածի անուշիկ նիւթը...

Երկնային գեղեցկութիւն... Նա ննջում
հալարտ ու վէս...

Ձը սիրել...

Մանր, հապա քո կիրքը...

Նա կամաց մօտենալով կնոջը, վրայիցը կողքն ընկած մետաքսէ կակուղ անուշաբոյր ջրերով որսկւած վերմակով ծածկեց նորան ու լռիկ համբուրեց նորա բոսորային թշերը... Կինը արթնացաւ. և ինչպէս ամենի արնարբու վագր մեծալիճ սև սև աչքերը խոժոռելով մոնչաց...

«Հեռացիր արեցող»...

Ա՛խ, ինչո՞ւ նա արթնացաւ...

Սև սև աչքեր, սև սև աչքեր... Հանճարեղ բանաստեղծների և նրանց ոլիմպիական կրքոտ մուսաների ոգևորութեան կարկաչիւն նեկտար ու ջինջ աղբիւրը... Երգեցէք, երգեցէք պարոններ, անկաշառ, զեղուն, ազնիւ, անաչառ, անբիժ, նեկտար, կաթոգին, երկնային, եթերային ձեր սէրը... Սէրը...

Ողորմելիներ...

Իսկ թէ երգէիք խելագարի պէր...

Ձէք հասկանում խելագարին...

Խորտակեցէք ձեր ուղեղի չինական պարբիսպները և դուք ազատելով կրքի գերութիւնից՝ կը տեսնէք ձեր ուռած կարմիր քթերը...

Թուշուշուրիկ արարածի գերի ամուսինը կնոջ մոնչոցի դէմ մլաւեց...

— «Հոգիս, դու բաց էիր. կարող էիր մրսել»...

— «Դու ինձ համար մի մտածիր: Գնա՛ դարձեալ այնտեղ, որտեղից եկար: Գնա՛ անպռակաւ»...

— «Սիրելիս, մի զրպարտիր ինձ... Ձէս սիրում, գոնէ մի անգամ... Մի՛թէ քո բերած ոսկիները, քեզ իրաւունք են տալիս, այսպէս ինձ խայտառակելու... Նոյնիսկ ուրիշների մօտ... Խղճա՛, հոգիս... Ես քեզ սիրում եմ... Իսկ դու ինձ հալածում ես...»

Նա լալիս էր... Հաւատացնում էր արցունք աչքերին նորան իր սէրը, իսկ կինը աւելի էր բղաւում... Նա խնդրում էր քնել հանգստանալ, իսկ կինը սպառնում էր հարևաններին գլուխը հաւաքել ու խայտառակել նրան:

— «Անառակ, լի՛րբ, հեռացիր...»

Սիրուն կինը սկսեց խտերիկայի նշաններ ցոյց տալ...

Երջանկութիւն, երջանկութիւն...

Եւ երջանիկ մարդը նորից հագնեց:

Ես դարձեալ փողոցումն էի...

Ստոր արարած...

Նորա ոսկեփայլ մահճի տակը մի պարոն կար թագնւած... Նա գեղեցիկ էր. թանր, առոյգ, փոքրիկ, փոքրիկ բեխեր...

Սատանա՛ կին... Դիւային հանճար...

Երջանիկ մարդը քնեց հիւրանոցում: Առաւօտեան երբ տուն վերադարձաւ, կինը գլորցի վրայ ունեցած անուշահոտ ջրերի մեծ ու փոքր շիշերով և այլ ձեռք ընկած իրերով ուժգնեց ամուսնուն, վերջն էլ կատաղած՝ մահճի տակից մի աման ջուր հանելով թափեց նրա գլխին և

անուշահոտութիւնը դարշահոտութեան փոխեց...

Իրարանցում...

Բդաւեց... Ճղաւոց...

Հանդիսականներ...

Քատրօն...

Դերասաններ...

Ֆարս...

Ամուսիններ...

Առաջին տեսարան:

Պարոնի ուշանալու բացատրութիւնը...

Երկրորդ տեսարան:

Կնոջ մեղադրանքը և նորան շրջապատած անլեզու կանանց մասլահաթները...

Երրորդ տեսարան:

Իստերիկա... Լաց... Հայհոյանք...

Չորրորդ տեսարան:

Ուշագնացութիւն...

Եւ...

Վերջաբան,

Կանայք դատաւորներ.

Գայլի դատաստան...

Պարոնն անբարոյական...

Երջանիկ մարդիկ, ոսկիների մէջ խեղդող պարոններ, այս չէ ձեր կեանքը...

Թշառականներ...

Արիւն թքեցէք ոսկէ կոնքում...



նցնում էին օրերը: Զոյգի պայ-
քարն էլ սուր աւելի ընթացք
էր ստանում: Մի գիշեր երջա-
նիկ ամուսինը եկաւ հարբած:
Կինը հրաբուխի նման պայթեց
ու լաւայի կատաղի փիժումով
հարեաններին ննջարանը հաւաքեց ու ցոյց տաւ
ամենքին հարբած ամուսնու ծիծաղելի դրութիւ-
նը լալով ու գանգատելով իր եղուկ վիճակի
մասին...

— «Պարոններ, միթէ մի այսպիսի մարդու
հետ կարելի է կառավարել...

Ահա ես միշտ այսպէս դժբախտ եմ»...

Ո՛վ է մեղադրում, թէ կինն է մեղաւոր...

— Այո, այո, դու դու դժգոլ իրրբաւաճի
ես... Իսկ ես երբ ջջջանիկ, որ մտածել չեմ ու-
զում...

«Խեղճ կին... Գոնէ տգեղ լինէր»...

Այդպէս ցաւակցելով հարեանները և հար-
բածին իրաչ հանելով ճեռացան... Արդարձ դատաս-
տան... Ամբոխ... Ոչխարի հօտ...

Թշառականներ, սակայն դուք իմացաք ինչ
փոթորիկ է մոնչում նրա ներքին աշխարհում...

Սիրոն կին...

Գերի ամուսին...

Մէկի կողմից սիրոյ կատաղիկիրք...

Միւսի կողմից կատաղի զգւանք...

Ինչո՞ւ...

Հարցրէք մեր բանաստեղծներին...

* *

Բաժակը լցւեց: Գերին կատաղեց: Նրա սիրտը պայթել էր ուզում: Դուրս գնաց փողոց: Նորից դիմեց փրկարար կարմիր հեղուկին: Օրօրւեց... Տատանւեց...

Մտաւ շքեղ զարդարւած մի հսկայ դահլիճ...

Սիրուն ու հերարձակ կանայք պարում էին...

Շարժում էին մսերը... Գեղարեւատ...

Բարձրի կատարեալ ազատութիւն...

Մի ձարպոտ ու պարարտ մարմին նւագում էր դաշնամուրի վրայ և ոգևորում հիւրերին... Սա էլ իր ձիրքն էր վաճառում... Երաժիշտի մօտ պատից կախել էին ոսկեգոյն շրջանակի մէջ մի թերթ թուղթ խոշոր տառերով տպագրւած, որտեղ գրւած էին այդ դահլիճի մէջ գործ ունեցողների իրաւունքներն ու պարտաւորութիւնները...

Օ՜, օրէնք... Օրէնք...

Հա, հա, հա, հա...

Փաղափարասպան մարդ, հասկանում ես քո արածը...

Ողորմելի... Ա՞յս է քո հանճարը...

Ամաչիր... Կարմիր...

Մնասո՞ւն...

Դու, նոյնիսկ ստոր ես նրանից...

Նա բնութեան դէմ չէ ըմբոստանում...

Իսկ դո՞ւ...

Կապիկ, հասկացիր, թէ ո՞ւր ես գնում...

* *

Դահլիճի պսպղուն յատակի վրայով պարոնս սկսեց պտտել... Նա պարում էր... Գեղեցիկ կանայք ծիծաղելուց թուլանում էին: Նա վայր էր ընկնում աջ ու ձախ... Նրա հետ պարող գեղեցկուհին, որը շատ էր ուշադիր հարբած պարոնին, որից միայն նողկալ կարելի էր, համբոյրներ տալով քիչ քիչ հրճւում էր...

Սիրելի, ու գգնել հարբածին...

Բղկալով բերնից թափողին...

Գոյութեան կոխ...

Իսկ դուք պարոններ...

Սողացէք ճահճի հերոսներ...

Հա, հա, հա, հա...

Գեղեցկուհին տեսել էր դեղին հզօր ոսկիները պարոնիս գրպանում... Նորա բերանից լուրձունք էր հոսում...

Սիրոյ լորձոնք...

Դժոխքի հարսեր...

Իսկ դո՞ւ...

Քանի, քանի անգամն էր վաճառել ազնուութիւնը, գաղափարը, դաւաճանել սուրբ սկզբունքները յանուն հէնց այդ ուսկու և ապրել երջանիկ...

երջանիկ...

Օ՛, ձեր երջանկութիւնը կանգնած է թշուառ մարդկանց կառափների վրայ... Սանդարամէտի ասպետներ...

* *

Դահլիճը լի էր հիւրերով: Քասս... Համբոյրներ... Իրարանցում... Սէր... Յարգանք... Լուստանք... Փաղաքշանք... Գարշահոտ ճահճի մէջ սէրը:

Եւ մի գեղեցկուհու շրջագգեստի քամին յանկարծ ինձ պոկեց կօշիկից ու ես կպած մնացի այդ թանկագին շրջագգեստի հարուստ պաճուճանքների անուշաբոյր մի ծալքում: Հիւրերն զբաղեցնում էին այդ ազատ թուչիկներին ու զոհաբերում Աթէնաս գիցուհուն սրտի վառ յոյգեր, տրփալից տենչեր, խանդ, աւիւն, կիրք, սէր... Բոլորը, բոլորը և արուններին յատուկ գոռոզութիւնով իրարից գերազանցել աշխատում...

Դիցուհիներին դուր գալու համար, մէկը իր մտքի ամբողջ կարողութիւնն էր շուայլում, միւսը միմոսութիւններով գերազանցելով կապկից՝ ծիծաղ էր բարձրացնում էգ կապիկների մէջ... Երրորդը ծիածանագոյն հարիւրանոցներ էր ծածանում այդ գեղեցկաթևիկ թիթեռնիկների զլլխին, վեր վեր հանում նորանց սրտերը... Չորրորդը բանաստեղծի՝ անկեղծ, անկաշառ, անմեկին, անգաւաճան, կաթոգին, գեղուն, նեկտար, անբիծ, սէրն էր երգում... Հինգերորդը փիլիսոփայի նման աչքի տակով լուռ ու մունջ խո-

րաթափանց դիտելով նորանց՝ աշխատում էր այդ այծեամների ուշադրութիւնը գրաւել... Վեցերորդը սիրոյ այդ վեհ տաճարում փրկսոփայում էր բարոյականութեան մասին... Իսկ մի քահանա էլ աջ ու ձախ համբուրելով «սրբութիւն սրբոց» էր քարոզում բղաւելով:

— «Սիրեցէք միմիանց»...

Տականքներ, կեղծաւորներ... Յոյց տւէք ձեր իսկական գոյնը...

Սև է աշխարհը ձեր շնչից...

Օ՛, աշխարհ, աշխարհ... Որքան դու դեռ թերի ես...

Դիցուհիները փքւում էին հնդուհաւի նման... Իւրաքանչիւրն աշխատում էր ցոյց տալ իր առաւելութիւնները...

Սիրամարդ կանայք, փոեցէք, փոեցէք ձեր գոյնգգոյն թևերը և տքնեցէք դիւթել, գրաւել, գերել...

Կեանքի բեմում կլին, խաղա քո գերը...

Սոսկալի գեր...

Ոճիր...

Սողա, ապրիր, լափիր...

Գոյութեան կոլիւ... հացի խնդիր...

Իսկ գութ վավաշոտ պարոններ, ձերն էլ է հացի խնդիր... Թէ սէրն է գեղուն բոցավառ...

Ուշքի եկէք, խղճացէք ընկած քոյրերին... Պատւի գնով միք, ապրեցնիլ նորանց... Մի անարգէք սէրը...

Սոսկացէք ձեր դերից պարոններ...
Վերածնեցէք...

Ախ, թէ ամենքդ խելագարւէիք...

* *

Ի՞նչ տարբերութիւն ոճրագործների և այս փափիլիկ կանանց մէջ... Աւագակին, ոճրագործին կախաղան... Նա սպանել թալանել է իր մերկ ու քաղցած երեխաներին ապրեցնելու համար... Միւսը մեխւել է անարգ սիւնին գաղափարի համար... Երրորդը պատւի համար սրախողխող դարձնելով ստորին տանջոււմ է բանտի խաւար կամարների տակ... Չորրորդը ոճրագործ է, որովհետև սպանել է մարդ գաղանին նրա ճիրաններից խեղճերին ազատելու համար...

Նեխւիր մարդկութիւն...

Ծիծաղում ես...

Ծիծաղիր... Զադիր քրքիջով...

Կանայք լալիս են...

Կին, ապրելու հեշտ միջոց է մնավաճառի խանութ պահելը... Սողալու համար ծախիր պարարտ ու չաղ միս... Գոյութեան կոխ... Ինչո՞ւ քրտնել... Ինչո՞ւ չարչարւել... Ինչո՞ւ աշխատել... Ինչո՞ւ ուղեղով մտածել... Ապրիր կրքով... Փաթաթւիր մէկի շինքին և կնոջ իրաւունքով տրդուկի նման ծծիր կրքոտ ւնասունին... Զեղամ... Սիրոյ նետերդ շեշտակի նետիր իւրաքանչիւր պատահածին և դու կ'ապրես...

Կուիր այդ հզօր զէնքով կին...

Իսկ դ՞ուք, օրէնսդիր քանքարներ...

Տեսէք, տեսէք, սպանութիւնը...

Գնդակով, թրով, սրով...

Այդ զէնքերով սպանողին հրացինի բռնիք, խեղդիք թոկով... Իսկ սիրով սպանողին փաղաքշիւր գգւանքով...

Սէր... Սէր...

Միլիօնաւոր մարդիկ գերեզման իջան հիւժւած նեխւած ու փթած, թողնելով աշխարհին գաճաճների մի այլասերլած սերունդ...

Օրէնսդիր հանճարեր...

Մարդասիրութիւն...

Ճիւղներ...

Գոյութեան կոխ...

Խելագարութիւն...

Մարդկային մտքի սոսկալի ծայրեր...



VIII

Ի՞նչ նոր բանտը հրաշալի էր. Գեղեցկուհին իւրաքանչիւր օր մի քանի անգամ սրսկում էր զանազան շիշերից հոտաւէտ ջրերով. ես ինձ յերջանիկ էի զգում...

Ա... Երջանիկ...

Պարոններ, բանտում երջանիկ...

Օ՛, որքան բարի էր հրաշագեղ տիրու-
հիս—այդ չքնաղ արարածը...

«Սիրեցէք միմեանց»...

Եւ նա ամենքին անխտիր սիրում էր...

Ա՛խ, սակայն ինչո՞ւ բարքերի ազա-
տութիւնը սիրող կանայք այնպէս գե-
ղեցիկ են լինում...

—Այդպէս չէ...

—Դուք այդ չէք նկատում...

—Ուրացէք ստախոս մարդիկ, որ ձեր
ամբողջ կեանքում միայն մի անգամն էք ճշմա-
րիտը խօսում, երբ արդէն սուտ էք խօսում...

—Նայիր կնոջդ... Տգեղ է, ուրեմն փողոն
էր... Գեղեցիկ է, ուրեմն փող ունեւ... Չէ որ
նորանք այդ զէնքով են կուռում ապրելու համար...

Ա՛խ, չը լինի՞ թէ բոլոր գեղեցկուհիները,
առհասարակ գրաւիչ ու թովիչ յատկութիւն ու-
նեցողները բարքերի ազատութեանն են կողմնա-
կից դառնում, երբ նորանց սպառնում է հացի
խնդիրը...

Իսկ եթէ այդպէս...

Սոսկացէք անփող ամուսիններ...

Ողբացէք թառամած հարուստներ...

Որոնել սկսեցի սորանց մէջ իմ կնոջը...

Մի՞թէ ես խելագար չեմ... Դարեր անց-
նելուց յետոյ...

Խելագար...

Նա, հա, հա, հա...

Դժբախտաբար ես նորան նմանը գտայ այս-
տեղ... Բանտը, որտեղ ինձ այնքան երջանիկ էի
զգում, պատկանում էր ճիշտ կնոջս նմանին...

Սնողո՞ք ճակատագիր... Որտեղից ես սորան
հանդիպեցի, որ յիշէի իմ տառաբախտ անցեալը
թշւա՞ռ ու սև... Անցեալ օրեր, սոսկալի օրեր...

Տիրուհիս ուրախ էր անվերջ... Նա պարում
էր անվերջ և ով որ տեսնում էր նորան,
բերնից սիրոյ լորձունք էր հոսում...

Օ՛ կանայք, կանայք, է՛ր անարգեցի՞ք ձեր
կոչումը...

Խեղդւեցէք արցունքի ծովում...

Մի՞ որոնէք վերածնութիւնը անարգանքի
բովում...

Սպասածիցս վաղ ազատեցի իմ դժոգը
բանտից։ Մի գիշեր մի պարոն, մի այնպիսի վառ
խանդով մօտեցաւ տիրուհուս, որ ոտից ց՛գուխ
սիրեց նորան, գուրգուրեց, գգւեց, նոյն իսկ թափ
տաւ փողին նորա թանկագին շրջագգնաթի վրա-
յից. ինձ էլ նկատեց. և ես ազատէի։ Դէն նետ-
ւեցի։ Ընկայ պարոնի գլխարկի վրայ փափուկ
մահճի մօտ...

Աէր, սէր, սէր...

Մի՞թէ սէր չէ այս...

Լուսաբացին այդ խանդոտ պարոնի հետ
գնացի նրանց տուն ու մնացի ապշած, երբ
ճանաչեցի այն հարսանքատան դահլիճը, որտե-
ղից ես եկած ընկել էի բարքերի ազատութեան
տունը...

Այն նոր ամուսնացած զոյգը արդէն լողում էր արցունքի սև ծովում... Ինչո՞ւ...

Գեղեցիկ էր կինը...

Բայց միթէ՛ ամեն մի գեղեցիկ կնոջ կարելի է սիրել...

Կինը սարսափելի լեզւանիկ էր, կրքոտ ու չար, իսկ ամուսինը կնոջ մէջ համեստութիւն ու հեղութիւն որոնող... Բնոյթների կատարեալ ծայրեր...

Մի օր կուշտ ծիծաղեցի դրանց վրայ, որ երբէք կեանքիս մէջ այդպէս ծիծաղած չէի...

«Սիրելիս, նկատում էր պարոնը.— իմացիր հաստատ, որ սիրոյ և ընտանեկան համերաշխութեան հիմնաքարը— գրաւականը, միմիայն հոգեկան գեղեցկութիւնն է— բնաւորութեան շիտակութիւնը... Արտաքին գեղեցկութիւնը ամուսինների մէջ միայն կրքին է լոյս տալիս, որը և անցողական է, իսկ ներքինը՝ մտքին ու սրբտին, զորը և մշտական է... Դու ունիս առաջինը, բայց միւսը բացակայում է քո մէջ... Բնութիւնը այդ երկու գեղեցկութիւններն էլ մէկին շատ դժար է տալիս... Բայց իմացիր, եթէ բնատուր շատ քիչ է տրւած, կարելի է ձեռք բերել այն կրթութեան միջոցով... Գոնէ կրթւիւր սիրելիս և ազատիւր ինձ այս դժոխքից...»

Ողորմելի մարդ... Ո՛ւր էին քո այդ փիլիսոփայութիւններդ երբ ամուսնանում էիր, երբ նշանած էիր...

«— Իսկ ինձ էլ հարուստ և ուրախ մարդ

է հարկաւոր, թէկուզ նա լինի և յիմար... Ամուսինս հարիւրանոցների հետ պիտի խաղայ, ոչ թէ լրագիրների... Ինձ լաւ ապրուստ է հարկաւոր, ոչ . թէ քո միտքը...»

Ա՛խ, չըլինի՛ թէ հէնց այսպէս է կեանքի մէջ... Ո՛չ...

Այո...

Միթէ կայ մի կին աշխարհում, որ սորա նման չըմտածէր... Եթէ այո, ցոյց տւէք նորան... Օ՛, նա է, նա, նա է իմ Ընկերը...

Պարոնը աշխատում էր զարգացնել կնոջը։ Ընթերցանութեան համար շարունակ գրքեր էր բերում, իսկ կինը գրքերի միջից թերթեր պոկելով քօռոցներ էր փաթաթում... Զո՛ւր ջանքեր... Պայքարը հետզհետէ սուր կեդրարանք էր ստանում։ Պարոնը վերջապէս յոգնեց։ Դիմեց եկեղեցու պետին։ Դարձեալ գուր-յոյսեր... Նրա պատճառաբանութիւնը չը յարգւեց։ Առաջարկեցին նրան եօլա տանել, որովհետև տգիտութիւնն ու բնոյթների անհամերաշխութիւնը ուժ չունի եկեղեցական սուրբ պսակ լուծելու, իսկ լեզւանիկութեան համար խօսք անգամ լինել չի կարող։

«Եկեղեցական սուրբ պսակ...»

Ո՛հ չարատանջ խնդիր...

Քանի, քանիսն է քեզանից տանջւում...

Սևագլուխներ, սխալաստիկներ, իմաստակներ...

Փորձեցէք ձեր կոպիտ ճարպահաստ կաշու վրան...

Ձեր խանութը միք յորջորջիլ աստուային խորան...

Մտաբանդ մարդ, հոգուդ բանալին որոնիր քո գանգի մէջ...

Իսկ դու, դարաւոր քուրմ, մարդկային հոգու տէր և հրամայող և արքայութեան ու դժոխքի դռան բանալիների մենավաճառ, երբ ես զգալու կեանքի պահանջը... Հերիք քարանաս ու նեխեա... Գոնէ դու շարժւիր և քո կոյր հօտը շարժիր առաջ և ոչ թէ պատնէշներ բարձրացրու նրա շարժման առջև... Մի օր կեանքի ալիքները կը խեղդեն քեզ... Բաւ է, որբան մեզ կերակրեցիր քո կասկածելի սրբութիւններով... Սրբութիւն...

Օ, թէ ի՞նչ նեխած ճահիճ է ծփում ձեր փառաշանների տակը և դարձ հոտերով լցնում ձեր աղօթատները... Հասկացէք վերջապէս մարդկային տգիտութիւնից չաղացող ճարպոտ խոզեր, որ ամուսնութիւնը կրօնական դօգմա չէ և ոչ էլ ձեր շղթայող մտքի հակաթուիչը...

Բեղմնաւորումն...

Կրօնաւոր, հերիք շղթայեցիր մարդկութեան հզօր միաքը... Այսքան դարեր հերիք զսպանակ եղար մտքի ազատ թռիչքների... Դուրս սողա քո կասկածելի խուցից... Քո վերջին ժամն է հընչում... Մօտ է քո վախճանը...

Հա, հա, հա, հա...

Դու վախեցած խելագարից...

Քարացած փիլիսոփա, զգւիր գոնէ տափակ մտքերից...

Ա, ներողութիւն սրբազան հայրեր... Դուք քիթ չունիք... Նրանք երկնքումն են... Այնտեղ այնտեղ, շատ հեռու, երկնքի ջրի շերտերի մէջ... Երկինքը ջրի շերտ...

Հա, հա, հա հա...

Ձէ որ դարեր շարունակ դուք այդ էք ապացուցում ստամոքսով մտածող փիլիսոփաներ...

— Քթամիտներ...



IX

արոնն սկսեց ջղերով ապրել: Հանգիստ որոնելու համար նա երկինք անգամ կը բարձրանար, ... Երեկոները նա սկսեց ուշ գալ: Այդ էր հարկաւոր և կնոջը...

Օ, չար լեզու, դու

թոյն ես օձի...

Նա պատէպատ գալով հաւատացնում էր ամենքին, որ ամուսինը անբարոյական մի սոսկալի հրէշ է.

Անիծեալ ուղեղ...

Նա սկսեց և հաւատացնել ամենքին, որ ամուսինը օրերով քաղցած է պահում իրեն և երեխաներին... Բոլոր աշխատանքը սիրուհիներին է ուտեցնում... Թէ իր ամուսինը գող է, խաբբայ, ուրիշների փող կլանող, ստոր, գելս, ցոփ, անհամուս...

Օ, կնոջ բառարան, տարօրինակ թանգարան...

Եւ նորա այդ թանգարանում քանի հանճարներ կորան...

Գիշերները ուշ վերադառնալիս ստիպւած էր լինում սպասել ժամերով դռան առաջ, մինչև որ կինը կը բարեհաճէր դուռը բանալ: Բանալուց յետոյ—կռիւ, հայհոյանք, լաց, խտերիկա, որից ստիպւած դուրս էր գնում, կամ ջղերն սպանելով կուլ տալիս կնոջ բոլոր լուտանքները մինչև լոյս... Ուստի նա շատ անգամ, երբ ուշանում էր, երկիւղից տուն չէր գալիս, գիշերում էր կամ ընկերների մօտ. բայց հաճախ հիւրանոցներում:

Ողորմելի մարդ...

Նա աշխատում էր ընտանեկան արատը ծածկել... Աշխատում էր ամբօխ տրամաբանութիւնով ապրել... Աշխատում էր ցեխի մէջ չընկնել, չէր ուզում ապօրինի կենակցել մի ուրիշի հետ.

նոյնը և կնոջ համար... Տքնում էր նորա մէջ յարութիւն տալ մարդուն: Բայց երկար տանջանքը դժբախտաբար նրան նետեց կարմիր հեղուկի մէջ, ուր նա սկսեց լողալ ու խեղդւել...

Սարտափելի էր մի գիշեր...

Կինը մինչև լոյս հայհոյում էր նրան, իսկ վերջինս ականջների ծակերը բռնած մատներով աշխատում էր չը լսել կնոջ լուտանքները... Ոչ մի խօսքին չէր պատասխանում, իսկ կինը աւելի էր կատաղում...

Սոսկալի տիպ... Երևի չէք հաւատում...

Իրաւունք ունիք... Ո՞վ է տեսնում իր աչքի գերանը...

Երկաթի համբերութիւն ունեցող պարոնը այդ գիշեր զրկւեց այդ համբերութիւնից, որը բաժինն է թոյլերի և տափակների...

Կնոջ լեզուն վառում էր նրան...

—Եկին, մի ստիպիր ձեռք բարձրացնել բեզ վրա... Վարդի փնջով անգամ անկարող եմ քեզ խփել... Ձեռն կարող ապրել... Բաժանւիր...

Ճայթեց փոթորիկը: Կինը այդ խօսքերից կատաղած, բարձերը ամուսնու գլխի տակից դէն նետեց առարկելով, որ իրեն է պատկանում. իր օժիտն է...

Օժիտ...

Ողորմելի երիտասարդներ, ի՞նչ ձեռք իդէալը օժիտն է...

Ամուսինը առանց տրտուշի իր վերարկուն ծալեց ու բարձ դարձրեց: Կինն աւելի կատա...

դեց: Վերմակն էլ խլեց: Նա մնաց բաց... Սեփականը չունէր: Կնոջ բերած օժիտը մեծ էր, ուստի հարկ չէր եղել նոր իրեր գնելու: Ստիպւած նա հագնւեց: Յուրտ էր: Դուրսը մի գազ ձիւն էր կիտւած...

—«Ստիպում ես հիւրանոց գնալ...»

—«Ինչո՞ւ, ոչ քո սիրուհիները մօտ...»

Այն սատանի բաժին... Ես կատաղել էի հաւատացեք... Թէ ես կարողանայի պատժել այդ դէի ծննդին...

Ու նրանք այնքան բորբոքւեցին, որ կինը բղաւելով սկսեց լալ ու կէս գիշերին սնհանգըստացնել հարկաններին:

Ամուսինը բռնեց նորան, ուժով պառկեցրեց անկողնու մէջ, ծածկեց վերմակով, որ նորա ձայնը դուրս չը գնար... Դարձեալ աշխատում էր վէրքը ծածկել...

Տարօրինակ պատւասիրութիւն...

Եւ դու ամբողջ այդպիսի պատւասիրութեան ծնողը և սնուցանողն ես...

Անմիտ, ապրիլ, ապրիլ ամբողջի կամքով... Ձեռն ուզում, որ քեզ քարկոծեն... Ողորմելի, դու չես ապրում, սողում ես...

Սակայն իզուր... Կնոջ ծկլթոցների վրայ հաւաքւեցին հարկանները... Նա պայթել էր ուզում... Կինն սկսեց մեղադրել չը տեսնւած ու լսւած մեղքերով... Իսկ վերջն էլ, երբ նա երդւելով հաւատացնել սկսեց, որ հրէշ ամուսինը վերմակի տակ գցած խեղդել էր ուզում նորան,

պարոնը էլ չը կարողացաւ տանել այդչափ ստոր զրպարտութիւնը... Ատրճանակն ուղղեց իր քունքին, բայց նրան այդ արգելեցին...

Մարդիկ զգում էիք նրա տանջանքը...

Ստիպեցին նրան դարձեալ ապրել ու տանջւել...

Կեանքի ծովում նրա նաւակն էլ խորտակւեց: Սկսեց լուսացնել գինետներում, պանդուկներում, հիւրանոցներում... Ընկաւ ծայրայեղ թշւառութեան մէջ... Կինը յոյսը կտրեց նրանից և զգաց իր սխալը... Սակայն ուշ էր... Պարոնը սկսեց քայքայւել... Բարձրի ազատութեան աշխարհից, ինչ որ հիւանդութիւն էր ստացել... Թուլամորթ, կործանումովդ յաղթեցիր կնոջը...

Կինը նրան դատաստան քաշեց: Յաղթեց...

Բաժանւեցին նրանց առանց եկեղեցու միջամտութեան և պարոնին պարտաւորեցրին տալ կնոջը ապրուստ, մինչև որ նա նորից կ'ամուսնանար...

Նեխուհի մարդկութիւն... Ձևիր օրէնքներ պատժելու համար... Իսկ յանցանքի տաճարներ կառուցիր, մօմ վառիր, խնկարկիր, որ մարդիկ դէպի այդ մօմը վազեն, թևերն այրեն ու պատժւեն...

Սոսկա, քո մտքի ընթացքից մարդ...

Սոսկա, և դու կին մարդ... Հերիք բարձ մասս... սիրիր աշխատանքը... Աշխատանքի

մէջ ձեռք բերելով քո իրաւունքը և մարդ
գազանին ցոյց տուր փրկութեան ճանա-
պարհը...

Դու ես ծնում բարին ու չարը... Գո առ-
գանդն է պողաբերում մարդկային այն սոսկա-
լի գանգաձը, որ դարեր շարունակ նեխում է...
Եթէ դու արժանի չես մայր կոչման, այրիւր քո
արգանդը, դժբախտութեան այդ որորանը, թող
մեռնի մարդկութիւնը... Ինչո՞ւ ես ծնում, ին-
չո՞ւ ես սնում... Իսկ եթէ դու չես կարող բնու-
թեան ուժը շրջել, թող ուրեմն նա իր ընտրա-
կան իրաւունքով մեզ օրօրէ... Մի՞թէ կոյն էլ
չէ մայր... էլ ինչո՞վ ես դու նորանից գանազան-
ւում...

Մարդկութիւն, մարդկութիւն... Դու կովե-
րի ու եղբրի հոծ շարան ես...

Իսկ քո բանականութիւնը՝ մի դժբախտու-
թիւն, քանի որ նրան շղթայաւ կը թողնես...



X

ա, ով որ նետեց պարոնիս դժ-
բախտութեան ուղին, տեսայ մի
օր նորան ճարպիկ բարակների
հետ զբօսնելիս...

Օ՜, բարքեր, բարքեր...

Իսկ պարոնի գրութիւնը սար-
սափելի էր: Սկսեցի ես էլ նող-
կալ նրանից: Կինը յոյսը վաղուց էր կտրել...

Գոյութեան կուրի համար նա զինւեց կանացի
հեշտ զէնքով... Իսկ ամուսինը ճառեր էր խօսում
փողոցներում... Իւրաքանչիւրին կրկնում էր այն
ճառը, որը նա վերջին անգամ արտասանել էր
դատարանում, մարդկային այդ խնկարանում,
երբ կինը մեղադրում էր նրան:

— «Մի՞թէ խելագարը կարող է այսպէս
դատել...»

Զարմանում էք անսիրտ մարդիկ... Քար
սեղմեցէք ձեր կուրծքին... Պարոնս այդ ճառով
հաց էր վաստակում... Ամեն տեղ նրան փող էին
տալիս և հիւրասիրում, երբ նա իր ճառն էր
խօսում...

— «Ի՞նչ լաւ փաստաբան է...»

Եւ չէք սխալւում... Փաստաբանութիւնն էլ
մի զէնք է կուշտ մնալու համար... Տափակ մարդ-
կութիւն, քո հիւանդ օրէնքներով այդ երկսայրի
զէնքն էլ կոեցիր, որ այդ զէնքով զինւած մար-
դիկ կանգնեն քո փառաշէն դատարաններում.
քո աչքին թող փչեն, քո ստեղծած օրէնքներով
գայլին գառ դարձնեն և ընդհակառակը, ծծեն,
քամեն գառին էլ գայլին էլ յանուն որոտնդոստ
արդարադատութեան...

Արդարադատութիւն...

Դատում է հօրը...

Դատում է թոյլը...

Կոյր մարդկութիւն, մի՞թէ չես տեսնում այդ
երկուսի տարբերութիւնը...

Օրէնքը՝ հօրների...

Օրէնքը՝ թոյլերի...

Տարբեր աղբիւրներից գոյացած էլէքտրական ոյժեր, որ գոյութեան կռւի փոթորկում միանալով՝ կայծակներ, շանթեր են արձակում, որոտում, մռնչում, պատառոտում, գոյութեան կռւի սև ու մռայլ, գոռոզ ամպերը էլէքտրականացնում և հոսեցնում կարմիր անձրև, հեղեղ ու տարափ...

Արդարադատութիւն... Քո զինւորները փաստաբաններն են, որ քեզ երկրպագում, պաշտում են գոյութեան կռուում... Արդարադատութիւն... Քեզնով առաջնորդողները հզօրներն են, որոնք շքեղ ու փարթամ պալատներում խեղճերի և թոյլերի քրտինքն են վայելում... Արդարատութիւն... Քո մեծ զօրութեան հաւատացողները թոյլերն են, բայց նրանք քո պատճառով մաշւում ու հիւժւում են խոնաւ բանտերի մոթ նկուղներում և ներկում քո խաչափայտը իրանց կարմիր արիւնով...

Արդարադատութիւն...

Եւ մի անգամ, այդ արդարադատութիւնից փաստաբան դարձած պարոնս գինեանում հարբելով գնաց քարքերի ազատ տունը, բայց նրան աշնտեղից դուրս փռնեցին:

Գեղեցկունիները զգւեցին. սոսկացին...

Տականքներ, չէ՞ որ դուք նրան վարձատրեցիք...

Նա ընկած էր փողոցի մէջ... Մռնչում, ոռնում էր փոթորիկը: Մաստիկ ցրտից ճռում էր

երկիրը... Պարոնս ծածկւեց ձիւնի կակուղ վերմակով... Մի վրդովէք, փափկասիրտ մարդիկ... Օրէնքով, արդար դատով, կախաղանն ու գնդակը վերապահւած են մարդասպանին, առաջակին, արդարութեան համար խելագարւածին, խաւարից դէպի լոյս սլացող խլուրտին... Պարոնս ոճրագործ էր... Անհրաժեշտ էր նոր տեսակի պատիժ... Եւ նա պատժւեցաւ խիստ... Կենդանի թաղեցին ձիւնի մէջ...

Կոյր մարդիկ, տեսնե՛լ էք ուզում արդարութիւնը...

Փակեցէք ձեր աչքերը և դուք կը տեսնէք խելագարին...

Պարոնս էլ կորաւ... Զբացաւ անհետ... Նրա նաւակն էլ խորտակեց կեանքի մրրկածուփ սև ծովի պղտոր ջրերում... Սակայն դուք զգացի՞ք երջանիկ մարդիկ...

Օ՛ դուք ծիծաղում էք այդպիսիների վրայ, խաւարի ոգիներ... Ծարպիկ վարպետ էք ձեր հոտած ու նեխւած ճահիճը ծածկելու համար ձեր արդար օրէնքների ծիածանագոյն շղարշով...





XI

Պարոնիս երբ կատաղի բամին ծածկում էր ձիւնով, գլխարկը՝ որտեղ ետ էի գտնւում, գլորելով տարաւ զցեց փողոցի մի անկիւնը, որտեղից վաղ առաւօտեան վերցրեց գործարան շտապող մի բանւոր: Բանւորի գտակը հին էր, բոլորովին անպէտք, ուստի իրենը դէն զցելով դրաւ գլխին գտածը՝ և սլացաւ առաջ: Հսկայ գործարանի ծխնելոյղները արտաշնչելով սև թանձր ծուխ, ներսը կրակի լեզուներով շոգեկաթսաներն էին լիզում և թանձր գոլորշիով լրցնում մեքենաների անյագ որկորները, կեանք ներշնչում ամբողջ գործարանին: Հազարաւոր բանւորներ կանգնած մեքենաների առջև խեղդող օդի մէջ աշխատում էին: Հարսներ ու օրիորդներ, աղջիկներ և երեխաներ, երիտասարդներ ու ծերունիներ դալկացած դէմքով, ամենքն էլ այն կտաւի գոյն էին ստացել, որը իրանք էին պատրաստում: Զերմաշափը բէօմիւրի 23 աստիճանն էր ցոյց տալիս: Իմ տէր բանւորը ներս մտնելուն պէս խեղդող օդից քիչ մնաց ուշաթափւէր: Իսկոյն հանեց պատառոտած վերարկուն, դրաւ իր դազգահի վրայ, գլխարկն էլ նետեց և

մըթմըթալով գործի անցաւ: Մի քիչ աշխատելուց յետոյ նա արդէն իրեն զգաց բաղնիսում և քիրտը հնամաշ պիջակի թեքերով սրբելով ճակատից, փողոցային հայհոյանքներով՝ դարձաւ իր չորս կողմում աշխատողներին:

— «Անասուններ, խոզեր... Ե՞րբ էք դուք մարդ դառնալու: Բաւական չէ մեզ շահագործում են, բաւական չէ, մեր արիւն քրտինքը գործարանատէրն է վայելում շքեղ պալատներում, դուք ողորմելի ճիճուներ, չէք ուզում նոյն իսկ թարմ օդ ունենալ: Չեզ ասում են, ձեզ բացատրում են, իսկ դուք անբան անասունների նման լուռ ու մունջ ձեր առջևը թափած հոտած ու փթած դարմանն էք լափում և բնութեան ձրի օդն էլ չէք կարողանում շնչել ազատ: Հազար անգամ ասացին ձեզ, գործադուլ յայտարարենք, ոչ թէ մեր օրավարձի համար, այն ողորմելի փշրանքների համար, որը մեր տէրը և՛ իր բազի շներին է նետում, այլ մաքուր օդ ունենալու համար, թարմ օդ ունենալու համար... Սողացէք գարշելիներ, և մի գեղեցիկ օր ձեր հոտած խրճիթներում կը սատակէք և ձեր սովալլուկ լակոտնորին փողոցը կը նետէք... Մեր տէրը միլիօններ է վաստակում ի՞նչ կը լինէր, եթէ նա օգահան մեքենաներով կամ նոր սիստէմի օդանցքներով մեր գործարանի ջերմութիւնը գոնէ 18°/0 հասցնէր և մենք հնարաւորութիւն ունենայինք ապրելու և մեր արիւնը ծծող տգրուկների համար աշխատելու... Նրա համար իր կոպէկն աւելի թանկ արժէ քան

մեր բոլորիս կեանքը: Գործադուլ յայտարարենք: Մեզ դրա համար ոչ ոք չի պատժիլ... Միթէ մեր այդ արդարացի պահանջն էլ ոտի տակ կը գնայ... Միթէ մենք իրաւունք չունինք ապրելու... Լաւ մտածեցէք, չեն ուզում: Նոյնիսկ 18⁰/0օդ տալ մեզ... Գարշելի խոզեր, հասկացէք վերջապէս, որ մի գրվանքայ հացի փոխարէն երկուսը չէք պահանջում ձեր տէրից, այլ 18⁰/0-ի եփածօդ, և այդ էլ զլանում են ձեզ տալու»:

Բանւոր տէրս երկար բացատրելուց յետոյ, խփեց իր դազգահի կոթին, կանգնեցրեց, հագնելով իր վերարկուն, գզակը և բղաւեց «գործադուլ»:

— Գործադուլ... Բղաւեցին աջ ու ձախ կողմից բանւորները և տաս բոպէի մէջ հսկայ գործարանը մեռաւ... Ամենքը հետեւեցին միմեանց... Գործարանի կառավարիչները իրար գլխով անցան, գործի հրաւիրեցին, համոզել սկսեցին, բայց բանւորների խառնիճաղանջ բանակը գոռ տաւ դէպի բակը:

Կառավարիչները հեռախօսի մօտ վազեցին...

Կէս ժամ չանցած սւինաւորները շրջապատեցին գործարանը: Նրանց հրաւիրել էին կարգ պահպանելու համար...

Ոչխարի հօտը սողաց դէպի փողոցը և այնտեղից խմբերով հրամանատարի հրամանով ցրւեցին աջ ու ձախ...

Բանւոր տէրս գնաց մտաւ գինետուն ու խմելով մի քանի բաժակ օղի և գրաւ թողնելով գտակը դուրս գնաց տաքացած...

Կախեցին գտակը, որի վրան ես էի կապած գինու մի լիք տակառի մօտ... Անմահական աղբիւր... Ով որ մօտենում էր այդ տակառին մռայլ ու մոլորած, հեռանում էր ուրախ, քրքիչների մի անագին շալակով, թողնելով այնտեղ գրպանի վերջին կոպէկը...

Գինեվաճառը կեանքի մարդ էր: Ամենքի հետ խօսում էր ժպիտն երեսին: Տգէտը թէ իմաստունը, խելօքը թէ յիմարը, աղքատը թէ հարուստը, միևնոյնն էին նրա համար, որովհետեւ խմածի փողը ով չէր կարողանում վճարել, միևնոյն դատի էր ենթարկւում— ծծծի կամ փառաւոր տկլորացման... Ունեցողներից խլում էր վերարկուն, եթէ արժէքաւոր է՝ գօտին, և այլ իրեր, որպէս գրաւ, իսկ չունեցողներին բռունցքներով մի անագին տառափով դուրս վռնգում, իսկ այնտեղից էլ մեր պահապանը հրեշտակները պինեվաճառի հետ կապած գաղտնի դաշնադրութեան ուժի համաձայն դէպի իրանց օթեանն էին տանում, իսկական տկլորացման ենթարկելու...

Ներս մտաւ նորից բանւոր տէրս մի խումբ ողորմելի արտաքինով մարդկանց հետ: Նրանք բոլորը ցնցոտեաների մէջն էին... Բանւոր տէրս գրաւը թափեց: Նա որպէս բանւորական կուսակցութեան պրօպագանդիստ դիմել էր կօմիտէին և փող ստացել... Գինեվաճառի տուռը ծաղկան կատարեց նրանց հրամանները: Սկսեցին ծծել կարմիր հեղուկը և հասան փրփրացման ուստի՝ ճառնին: Թքեցին անարգեցին խորոդ օրէնքներ...

ըր, իսկ նրանցից մէկը ասածներն աւելի գու-
նաւոր դարձնելու համար, ցոյց տւաւ իր մերկ
կուրծքը և բոբիկ ոտները: Նա կատարեալ բո-
բիկ էր: Իսկ երբ նրան կարմիր հեղուկը դարձ-
րեց համարձակ, հրամայեց մարսելոգ երգել: Իսկ
ինքը սկսեց խրոխտ բայել տակաւի առաջ...
Նրանք տաքացած դուրս գնացին փողոց և այդ-
տեղից էլ գործարան որոշուած ժողովին: Բանւոր
տէրս տատանւելով առաջնորդում էր նրանց:
Գործարանի հսկայ բակը գլուխների ծով էր...
Բոբիկը բարձրանալով ամբիօն սկսեց կրակոտ մի
ձառ...

— «Պրօլէտարիա...

Ծամեց, ծամծմեց Մեծ Սօցիալիստի Ծամոնը...

Գոռոմ, գոչոմ...

Այդ պահուններէ վրայ հասաւ արնակտուց
բազէների սւինաւոր մի վաշտ և պաշարեց գոր-
ծարանը: Կորէկ երազող ծտերը թփերի մէջ
խծկւեցին: Կորան, անյետացան, իսկ մի քանիսն
էլ լողացին կարմիր ջրի մէջ...

Բանւորների բանակը այժմ գոռո տւաւ գոր-
ծարանի ներսը աղաղակելով...

— Թարմ օդը փողոցումն է և ոչ թէ գոր-
ծարանում...

Ամբօխը՝ ոչխարի այդ հօտը արձագանք տը-
ւաւ... Միմիայն տուժեց բանւոր տէրս: Նա
անմահացաւ...

Թշառականներ, ձեր բողոքը կը մնայ միշտ
բողոք, քանի որ դժբ ձեր բողոքն ու իրաւուն-

քը գիտակցօրէն չէք շրտել գոյութեան կուռում...

— Իրաւունքի հաւասարութիւն...

Սակայն ո՞վ այդ անհաւասարացրեց, թշա-
ռական...

Լաւ քննիր հզօրին... Տես, նրա ուժը...

Ո՞վ զրկեց քեզ այդ քարիքից...

Բնութիւնը...

Նա թոյլին ոչնչացնում է իր անողոք օրէն-
քով... իշխողը հզօրն է միշտ... Մտքով հզօ՞ր...
Ուժով հզօր... Այդ երկուսն էլ զէնքեր են տար-
քեր տեսակի, տարբեր դարերի պահանջ...

Զինւիր ուրեմն, որով կարող ես...

Խեղադարւիր...

Եթէ ոչ՝ դու կորած ես...

Կուրացէ՛ք թշառականներ...

Ամեն մի դար իր ոգին ունի... Կարմիր...

Մտաւորն անզօր է արնաթաթախ սրի առաջ...

Մէկը միւսի գօրաւիզն է...

Պրօլէտար...

Հա, հա, հա, հա...

Հզօրը յաղթեց...

Տիրեց գերեզմանային խորին լուսթիւն...

Գերեզման մարդկութիւն, դու միմիայն պէտք
է հաւասարեւս գերեզմանում...

Հաւասար ծնւիր, անհաւասար ապրիր, հաւասար
մեռիր...

Որկորիդ փականները գիտակցիր...

Ե՛ւ հաւասար ապրիր...



XII

անւոր տէրս բանտ գնալիս մտրակի ախան հարած վայելեց, որ վրան փոշիի հիւլէ անգամ չմնաց: Միայն ես էի մնացել, որ ինձ էլ դուրս թողրին բանտում: Բանտի ընդունարանում, եթէ այդպէս կարելի անւանել խողային սպանդանոցը, երբ բանւոր տէրս մտրակի վերջին գործողութեանն էր հանդիսատես, ես օդի մէջ պտտւելով գնացի ընկայ մի մանկահասակ տիկնոջ ուսին, որը բանտից ազատւած տուն էր գնում: Բանտապետը, որ բարձրահասակ յաղթանդամ, ձիւնի պէս փայլուն մազերով միջին հասակի մի մարդ էր, ախան բարի ու հեղ դէմք ունէր որ նրան չէր սագում մտրակի և տանջանքի աւետարանիչ լինել: Բայց ես սխալւած էի: Մարդու արտաքինը շատ է խափուսիկ: Եւ այդ բարի և հեղ դիմագծերով պարոնը ներքուստ մի գազան էր արիւնըրուշտ: Նա հէնց այսօր երեք անմեղ բանտարկեալի գնդակահար էր արել, որպէս խռովարարների և այդ դէպքը պռաջինը չէր: Եւ ով է քննողը... Չէ որ նրանք արդէն արդարադատութեան սուր ժանիքների համա առել էին...

Աւելորդ տեղ էին բռնում... Եթէ հասարակական, այսինքն ոչխարային կարծիքը չը լինէր, հօրները ստեղծագործած այդ արդարադատ օրէնսգրքի մէջ միայն մի յօդւած կը լինէր:

— «Ոչնչացնել նրան, ով որ հօրների և նրանց արբանեակների բարեկեցութեան խանգարիչ կը հանդիսանայ— գործով, գրչով թէ խօսքով»...

Բանւոր տէրս 18⁰/₀ օդի փոխարէն ստացաւ 1⁰/₀-ը բանտի ներքնայարկում մի խուլ ու մութ նկուղի մէջ: Մանկահասակ կինը գլխիկոր նստած բանտապետի հրամանին էր սպասում: Հէզ դէմքով բանտապետը տարաւ նորան իր առանձնասենեակը և նստեցնելով բազկաթոռին գրկեց մանկահասակ կնոջ իրանը և համբուրելով ասաց:

— Ահա ես աշխատեցի ազատել քեզ և ազատեցի, այժմ ինչով պիտի վարձատրես ինձ... Հը՞, գեղեցիկս, ասա...

— Ես ոչինչ չունեմ... Մի պատիւ ունէի, այն արդէն դուք անարգեցիք: Սրանից առաւել էլ ինչ վարձատրութիւն...

— Ահա թէ ինչ... Այդ պատիւը վաղուց է անարգւած գեղեցիկս, հասարակաց տան մէջ: Դու ընդհանրութեան ես պատկանում...

— Ոչ, դուք սխալւում էք: Այս բանտի ինքը կամարների տակ դուք ինչ էք անում... Չէ որ մի կտոր հացի համար էք այստեղ տանջւում... Ես էլ նոյնպէս բարքերի ազատ աշխարհում...

Հետևաբար հացի համար թէև ստիպւած, բայց իմ անգամ կամքով եմ ինձ վաճառում...

—Ուրեմն արդէն դու վճարւած ես համարում քո պարտքը...

—Անկասկած. այն էլ կրկնակի...

—Ուրեմն, սպասիր և վաղը առաւօտը կերթաս:

Եւ նորան տարաւ մի ընդարձակ սենեակ և ցոյց տալով մանձակալը ասաց:

—Այստեղ հիւրեր կը գան և դու իրաւունք չունիս մերժելու...

Բանտապետը դուրս գնաց:

Առաւօտեան մանկահասակ կիներ յոգնած, ուժապառ դուրս գնաց բանտի երկաթէ դռներից: Նա քաղցած էր, իսկ գրպանում ոչ մի կուպէկ: Բարձրերի ազատ տունը այլ ևս նա չէր ուզում վերադառնալ: Վճռել էր իսկական աշխատանքով ապրել: Ու նա գնաց ծառայողներ վարձուող գրասենեակը և ցանկութիւն յայտնեց ծառայելու: Գրասենեակի տէրը, որ հասակն առած խոշոր աչքերով և մեծ քթով մի պարոն էր բարակի յատուկ հոտառութիւնով, որոշեց, որ սուրան կարելի է լաւ շահագործել:

—Ձեռ անցադիրը կարելի է տեսնել: Հարցրեց մեծ քիթը:

Մանկահասակ կիներ կարմրեց, չը նայած պահանջւածն ունէր: Բայց նա չէր ուզում այն ցոյց տալ, որի մէջ օէրնքի համաձայն գրւած էր նորա պարապմունքը:

—Դուք երևի չունէք, շարունակեց մեծ քիթը, երբ տեսաւ, որ նա լուռ էր:

—Ոչ ունիմ. Դուք առանձնասենեակ չունիք. ցանկանում եմ առանձին խօսել:

Գրասենեակում նստոտած վարժու կանայք և օրիորդներ իրար նայեցին, որոնք մօտ երեսունի չափ կային:

Գնացին: Նա պատմեց:

—Ես ցանկանում եմ այսուհետև ազնիւ ապրել, եղբայրակեց նա արցունք աչքերին:—Ասացէք պարոն, միթէ՞ ես մեղաւոր եմ...

Մեծ քիթը ցաւակցելով խոստացաւ աջակցել, մինչև անգամ և ամուսնացնել քաղաքացիական ամուսնութիւնով... Ապա նորան տաւ մի քանի հասցէներ:

Մանկահասակ կիներ ուրախ տրամադրութիւնով դուրս գնաց և ուղևորեց մեծ փողոցը ուր բնակւում էր հասցէներից մէկը, որի մասին մեծ քիթը մեծ գովասանքներ էր արել:

Էլէքտրական կոճակը հպեց: Բարձրացաւ:

Ներս մտաւ մի սենեակ, ուր նստած էր հասցէն: Պարոնը վայելուչ հագնւած մի երիտասարդ էր դեղեցիկ կազմաւածքով:

—Լաւն է... Մտածեց նա և սկսեց ճարպկորէն նպատակին մօտենալ խօսակցութեան միջոցով, իսկ երբ կնոջ բերած ծրարը պատկեց ի կարդաց լակոնական գրւածը—«Նորանցից է»... Իսկոյն մօտեցաւ ասելով:

—Ինչքան լաւն էք... Եւ շոյեց նորա թուշերը...

—Պարոն, ես գործ եմ ուզում, մի՞թէ դրա համար էլ պէտք է մարմին վաճառել...

Եւ մանկահասակ կինը դուրս գնաց արցունք աչքերին: Շրջեց բոլոր հասցէները, ամեն տեղ նոյն սէրը...

Վերադարձաւ գրասենեակ և սրտի ազնիւ զարոյթի ամբողջ թափով թքեց մեծ քթին ու դուրս եկաւ գնաց հեկեկալով...

Մեծ քիթը իրեն հաշիւ տալ չըկարողացաւ: Խեղճ կինը յոգնած ու քաղցած քայլում էր: Վեց տեղ էր այցելել, և վեց տեղում էլ նորան բռնաբարել էին...

Օ՛, մարդ գազան, մի՞թէ դու կարող ես ազնւանալ... Շահագործիր խեղճերին, լկիւր անձարին և պատւի գնով հացի փշուր նետիր դրժբախտին և յագուրթ տուր քո սինլընոր կրքերին... Բաւական է նեխեա, քարացիր...

Զմուռն արեւ մայր մտաւ: Մանկահասակ կինը վճռեց առաջին հանդիպողից, որպէս ողորմութիւն հացի փող խնդրել: Անցնում էր գեղեցիկ հագնւած մի պարոն: Դիմեց: Պարոնը ապշեց: Նա չէր հաւատում իր աչքերին, որ այսպէս մի վայելուչ հագնւած տիկին ողորմութիւն խնդրէր: Դազանը ոռնաց նրա գանգում: Առաջարկեց նորան գնալ իր հետ տուն և ընթրել: Կինը հասկացաւ նրա միտքը: Բայց քաղցն ստիպում էր հետեւել նրան: Նրանք մտան հիւրանոց ուր ապրում էր պարոնը: Նա կուշտ էր, բայց զարձեալ պատւի գնով... Գիշերեց և նրա հետ,

որովհետեւ տեղ չունէր գլուխ դնելու: Առաւօտեան երբ նա պատրաստուում էր հեռանալ, պարոնը մի ոսկի դրեց նորա բռն մէջ: Կինը խրժեց նրա երեսին այդ ոսկին և մանրամասն պատմելով բոլորը՝ աւելացրեց...

— Եւ քանի՞ քանի հազարաւոր կանայք կան, որոնք ինձ նման ուզում են յարութիւն առնել, իսկ դուք պարոններ, այսպէս ճահիճն էք գլորում... Ա՛խ արդարութիւն, արդարութիւն... Նա լալիս էր...

Պարոնը, որը լրագրող էր, ցնցւեց... Խօսեց նրա ներքին աշխարհը...

— Տիկին, աղաչում եմ ներեցէք ինձ... Եթէ դուք այդ սկզբից ասէիք... Ես թոյլ չէի տալ լինել գազան, չընայած առանց դրան էլ պարտաւոր էի ազնիւ լինել... Բայց մարդու կիրքը... Օ՛, նա հացի խնդրից աւելի է նեխում մարդուն... Ես նոր եմ եկել քաղաքը. արդէն բնակարան եմ վարձել: Վաղը պէտք է տեղափոխւեմ: Եղէք այստեղեւ ինձ քոյր: Ապրեցէք ինձ մօտ, որքան կուզէք: Թէեւ ես հարուստ չեմ, բայց ամսական աշխատում եմ մի գումար, որ ինձ, ձեզ և միակ դաւակիր գոնէ չոր հացի համար կրբաւէ:

Ու նրանք միացան, որպէս հարազատներ:

Անցան մի քանի օրեր: Պարոնը գրժեց իր երդումը: Նրա գազանը նորից ոռնաց, իսկ մօնկահասակ կինը հաշտեց վիճակի հետ, երբ պարոնը նորան ոտից գլուխ գուգեց, զարդարեց և մի գումար էլ տուաւ, որ զիզի սիրող տիկինը գնէ ինչ որ ցանկանում է,

Նա թուվալով դուրս գնաց ու մտաւ իսկոյն մի հարուստ վաճառատուն: Մետաքսեղէնի թանկագին կտորներ... Իրարով անցած խայտաբղէտ կանայք... Գերազանց մրցում... Վաճառականը ցոյց էր տալիս մէկը միւսից գեղեցիկ կտորներ: Զիզի սիրողների սիրտը վեր վեր էր թռչում...

Դժբախտ արարածներ...

Այդ զիզիների համար քանի քանի անգամ էր ծախել ձեր պատիւը... Ձեր իղէալը... Ձեր ամուսնուն... Ձեր գաւազների ապագան նոյն իսկ... Տրորել ցեխի մէջ ամեն մի գաղափար...
Ո՛հ...

Այո...

Մանկահասակ էին, դու չը կարողացար տանել աղքատութիւնը, հասարակ հագուստը... Բո մէջ խօսեց մարդը... Բայց դու գարձեալ նրան լռեցիր...

Ո՛հ...

Այո...

Եթէ ո՛չ, ցոյց տւէք մի կին, որ չէ ուզում դուր գալ—բորբոքել արու գազանի կրքերը և աւելի խորը գլորել ճահճի մէջ...

Յիմար արուներ...

Սահմանափակեցիք կանանց իրաւունքը, ուզեցիք ստրկացնել նորանց, ձեր հաճոյքների և կրքերի զարդ դարձնել... Բայց ինքներդ ընկաք քաբելոնեան գերութեան մէջ... Այո, դուք գերի էք ձեր անասնական կրքերի, իսկ նորանք հմուտ

վարպետ այն բոցավառելու և ամբողջ մարդկային զանգւածը աւելի ևս նեխելու...

Ո՛վ յաղթեց...

Մեծամիտներ, նայեցէք ձեր շուրջը... Դուք սողում էք նորանց զարշապարների տակը... Իսկ նորանք շահագործում են ձեր կրքերը և այդպէս երկու կողմից աննկատելի կերպով իրար յօշոտում, լափում ու սողում...

Չաղրելի մարդիկ...

Զէ որ դուք ընկերներ էք...

Ընկեր...

Երբ և իցէ եղբւր էք ընկեր...

Օ, կանայք, կանայք, փշերով ծածկւած անհոտ ծաղիկ էք սիրոյ շքեղ պարտիզում, իսկ ձեր ամուսինները էգօրստ արուներ գազանանոցում...

Սէր...

Երբեքից սիրեցիք միմեանց...

Կարմիր մարդկութիւն... Դու դեռ հաւակնութիւն ունիս բնութեան մէջ պսակ համարւելու... Խոզեր... Նրանք էլ են սիրում կեղտոտ ձագուկներ, իսկ արուներին...

Հա, հա, հա, հա...

Կուիր դու կին քո մի գէնքով... Նա հզօր է դէմդ ելած սոսկալի արջերի ուժից... Նա թոյնով է ջրաւած քո սիրոյ նման... Դու մի կասկածիր քոնն է ապագան...

Ա՛խ, եթէ դու վերածնւէիր...

Վերածնւէիր և այդ հզօր արջին...

Քանի հզօրներ գերեզման տաքար... Քանի հանճարներ կենդանի մեռցրիր, ստանալով նրանցից լաւագոյնը...

Թշառականներ, պարծեցէք ձեր տարբեր գէնքերով... Լպտեցէք տականքը կեանքի... Օ, որքան դու խղճալի ես մարդ...

Մսավաճառի խանութի առջև, միշտ քաղցած շների ոհմակներն են շրջում և ոռնում...

Շներ...

Ահա ձեր ընկերները...

Սէր...

Ընկեր... Սիրում եմ ես քեզ... Ոռնացէք որքան կողգէք... Ոռնոցը շանն է սիրելի... Ախ, եթէ դուք գեղգեղէիք... Սլանայիք դէպի այն վսեմը... Կրքոտ մարդիկ... Կրքի զոհեր... Որկորի գերիներ և ստրուկներ... Սէր...

Սարսափիր Պալլաս... Ես ապրում եմ խելագարի ուղեղով... Խելագարի սիրով... Ախ թէ ամենքդ այգպէս... Կանիծէիք բոլորը, որ մղելով առաջ կիրքը, բթացրիք հզօր ուղեղը ու դարձաք անասուն սողուն...

Օ, դուք սողում էք... Կիրքն է ձեր իդէան... Յոյց տւէք մի մարդ, որ սիրեց մշտական...

Սողուններ...

Եւ այդ սողունները գնեցին վաճառականի թանկագին կտորներից։ Ես ընկայ մի գեղեցկուհու գնած կտորի վրայ։ Նա տարաւ ինձ, իսկ մանկահասակ կիներ գնաց նորից սողալու...

XIII



այիսեան վարդի նման փրթթող տիկինը շրջագետտի թանկագին կտորը ձեռքին ներս մտաւ մի հոյակապ ապարանք։ Դարձեալ երջանիկ մի գոյգ... Փարթամ, ձոխ ու շքեղ ապրուստ... Կատարեալ մի դրախտ... Ամուսինը փառել սկսեց նորան...

Ծայրեր...

Գեղեցկուհին փթթում էր որպէս գարուն, իսկ ամուսինը...

Յիմար մարդ...

Դ՞հա ես երջանիկ...

Հա, հա, հա, հա...

Նա թօշնել, թառամել էր, դարձել ալեգարդ ձմեռ։ Բայց նա անցեալի կրակոտ ու վառ յուշերով վառւած դուրս էր գալիս կաշուցը կնոջը դուր գալու համար և կնոջ արշալոյսը բոցավառել հրամազ ու ջերմ ճառագայթներով, բայց բնական անողոք օրէնքը մահւան սառնութեամբ վերջին մեղեդին էր շշնջում նրան... Նա յամառաւոր կունութեամբ կատարում էր նորա բոլոր տեսակի քմահաճոյքները, որպէս թիթեռնիկ թռվոռ

կնոջ շուրջը փորոսող տալիս, իսկ կի՛նը... Օ՛հ, նա ծիծաղում է...

Նորան փող էր հարկաւոր, փող...

Իսկ ծերուկն ունէր այդ փողը...

Շրջագգեստը պատրաստ էր: Տիկինը գուգ-
ւած ու պճնւած դուրս գնաց գրօնելու... Կա-
տարեալ յաւէրժահարս... Ամուսինը նոյնիսկ ցան-
կացաւ նորա հետ գրօսանքի ելնել...

Բայց...

— «Ա՛խ էլէնա, ես ինձ երջանիկ եմ գտում,
երբ հետդ գրօնելիս նկատում եմ, ինչպէս դու
ամենքի ուշադրութիւնն ես գրաւում և բոլորի
հայեացքը վրայդ բևեռում»...

— «Միւս անգամ ջանիկս, այժմ ընկերուհուդ
մօտն եմ գնում»...

Նա գրօնում էր մենակ... Իսկ ամուսինը
տանը խելօք նստած ոսկի օրերի յուշերով ապ-
րում...

Մթնեց:

Յաւէրժահարսը հասարակաց պարտիզի Թա-
ւուտներում նստած նորաբոյս գեղեցիկ ընչացք-
ներով մի առոյգ երիտասարդի հետ ծլվում էր...
Ձոյգի չորս կողմից բարձրացած նորաբաց անու-
շահոտ ծաղիկները մեղմ զղզղուն գեփիւռի հետ
փափալով սոսափում էին, իսկ գլզլան վճիտ առ-
ւակը անուշութեամբ սահելով զոյգի առջևով իր
շրշիւն կարկաջով ներդաշնակում գիշերային խո-
րին լուութիւնը ու նրանց ջերմ համբոյրների
աղմկիկները պաշպչելով նիրհում, այդ խորհրդա-
ւոր լուութեան մէջ... Լուսինը վերելից նոսր ամ-

պերի տակից ծիւկ ծիւկ նայում էր լուիկ... Հիաս-
քանչ դիշեր... Ո՛ւր ես բանաստեղծ... Գաղում
են վարդեր... Սէր, սէր...

Կախարդ կին... Վալաշոտ արարած...

Լուծիր վրէժը տառապող քոյրերիդ...

Արուններ և էգեր, խաբեցէք միմեանց...
Կեղծեցէք ամեն ինչ... Սէր... Մարդ, պապանձ-
ւիր գոնէ... Ճահիճը մի վարագուրի վարդազոյն
շղարշով, քո անմիտ ըարոյական սկզբունքներով...
բաց աչքերով նայիր լոյսին և մի կոչիր նրան
խաւար և գլորիլ մարդ անասուն գազանին թիւ-
րիմացութեան ճահիճը...

Երիտասարդը ուղեկցեց իր վարուժանին
մինչև գեղեցկուհու պալատի դռան շէմքը, ապա
ինքը անհետացաւ փողոցում տիրող խաւարի մէջ...

Ամուսինը սեղանի առաջ գլխիկոր նստած
սպասում էր իր սրտի հատորիկին...

— «Էլէնա, ան դու շատ ուշացար»...

— «Կասկածում ես... Իսկ ես զգում
եմ խանդոտ ամուսնուց... նորանց մօտ
լօտօ էի խաղում...»

Եւ նա գողտրիկ քիթը վեր ցցած անցաւ
ննջարանը ու պինդ կողպեց դռները յետևից...

— «Էլէնա, հոգիս, գուցէ վիրաւորեցիր...

Ախր ինչից եզրակացրիր այդ... Թոյլ տուր սի-
րելիս, դամ համբուրեմ քեզ, որ հաւատաստես...»

— «Լաւ, լաւ, վաղը ջանիկս... Այժմ յոգ-
նած եմ... Ուզում եմ քնել...»

Ամուսինը լռեց...

Եւ գամփռը բերնից լորձունք թափելով
մռափեց դռան առաջ...

Հաւատարիմ և պահապան շուն...

Ա՛, բնօրյշ արարածներ, և դուք չէք սխալ-
ւում, որ ամիսը մէկ հոտած մսի լալ տալով
պառաւ անատամ գամփռին, ապրում էք որպէս
վարուժան աղանձներ ոստից ոստ ճախրելով...

Օ՛ այդ ոստերը... Շարունակեցէք այդպէս...
Կրտիրէք աշխարհը... Իսկ դուք գամփռներ, որ-
քան կուզէք ոռնացէք սուրը սկզբունքներով...
բարակներին են որսի տանում...

* *

Գամփռը լալիս էր: Նա հասկացել էր իբր
սխալը:

— «Պատիւ... պատիւ...»

Պատիւ... Մոռած որքան կուզես... Իսկ դու
քանի անգամն ես այն վաճառել... Պատիւ...
Նամո՛ւս... Յիմար մարդ... Ինչո՞ւ ստեղծեցիր այդ
հասկացողութիւնը... Տանջւիր ուրեմն, անտըր-
տունջ... Դու չես կարող առանց իշխող և կաշ-
կանդող մտքերի ու սովորութիւնների ապրել...

Ընկերական դատ...

Երջանիկ գոյգը բաժանւել էր ուզում... Ա՛խ,
այդ անիծած բաժանումը...

Աչքակապութիւն... Կոմեդիա...

Պարոններ, գոնէ կարմրէիք... Նոյնպիսին
և դուք էք... Դատել... Դիւրին է գատել ու խաչ
հանել ուրիշին... Ու սուր մտքերի մի հարւածով
վճռեցին:

Հարուստ ծերուկը պարտաւոր էր տալ իր
փետրած թռչնիկին ապրուստի միջոց, մինչև նա
կամուսնանայ մի ուրիշի հետ, որովհետև հարուստ
փեսան հասակակից կին չէ ընտրել...

Արդար պատիժ...

Բնական պահանջ...

Իրաւունք...

Փեսան բողոքեց և դիմեց եկեղեցական օ-
րէնքին: Հրամայեց լուծել պսակը: Գեղեցկու-
հուն զրկել ամուսնանալու իրաւունքից, իբրև
պօնիկի... Տալ փեսային իրաւունք ամուսնու-
թեան...

Հոգևոր հայրեր... Դատաւորներ...

Յետոյ...

Դարձեալ կոմեդիա...

Բողոք:

Այժմ տէրունական դատ...

Աշխարհական դատաւորներ...

Վերջը...

Վկաների ցուցմունք... Փեսան յաղթւած:
Երկուսից մէկը կամ տալ ապրուստի միջոց կամ
հաշտուել: Հակառակ դէպքում զրկելով հանդերձ
ամուսնանալու իրաւունքից նրան սպառնում էր
և մի այլ յօդւած—զրպարտութիւն: Զարիքից
փոքրագոյնը: Համաձայնեց տալ կնոջը ապրուս-
տի միջոց...

Եւ գեղեցկուհին արցունք աչքերին թողեց
պալատը: Նա չէր ուզում այդ: Նորա ցանկու-
թիւնն էր ապրել փարթամ ու շոայլ և ամուսնու-

պատուով վայելել կեանքի քաղցրութիւնները...

Ցուցանակ ամուսիններ...

Չէ, յարգելի տիկիններ...

Մակայն և՛ այդ ձեր իրաւունքն է... Ո՛վ
չէ ցանկանում երջանիկ ապրել... Ձեր ամու-
սիններ ըստ լրացրէք ուրիշների առաւելու-
թիւններով և այս կեանքը կը դառնայ մի դրախտ
արցունքի գետերով, ուր լողալով կը խեղդէք
մի օր և ձեր իսկական երջանկութիւնը կը գտնէք
գերեզմանում ճիճուների բեղմնաւորութեան
մէջ...

Եւ այդպիսի երջանկութիւն որոնող գեղե-
ցիկ տիկինը հիւրանոցում էր։ Ոչն երիտասար-
դի հետ նորան այցելում էին և ուրիշ փոքրիկ
բեխերաւոր երիտասարդներ և աշխատում էին
գեղեցկուհուն շարունակ երջանկութեան մէջ
խեղդել...

Ժպտում էր կեանքը... Թարմութիւն... Նա
ամենքի համար էլ սիրոյ անսպառ աղբիւրից բա-
ժին էր հանում...

Սէր...

Հասկանում ես մարդ գազան... Սէր...

Թշուառականներ...

Երբ նորա հոմանիքները միասին էին պատա-
հում տիկնոջ մօտ, խօսում էին գաղափարից,
ճշմարտութիւնից, սաւառնում գէպի գեր-մարդը...
Իսկ առանձին առանձին սողալով լիզում նորա
գարշապարը...

Խեղկատակներ...

Չըզարմանալ... Յաւերժահարսը միշտ իր
դերուհին էր...

Պարոններ, իսկ ձեր կանայք...

Տիկիններ, իսկ ձեր ամուսինները...

Հա, հա, հա, հա...

Կոխ տւէք իրար ցեխի մէջ տարտարօսի
զաւակներ և երեացէք իբր անմեղ գառ-
նուկներ...

* *

Մի առ ժամանակից յետոյ ամուսինը այլ
ևս չէր ուզում վճարել։ Դիցուհին դիմեց դատի-
ն երկրպագու հաւատարմատարները իրենց սիրոյ
կլիէնտին մի այնպիսի խանդով պաշտպանեցին.
դատարանում, որ մինչև անգամ նորան դուրս
բերին բռնութեան զոհ և պահանջեցին մշտա-
կան ապրուստ, անարկելով որ ազնիւ տիկինը
անպատւաբեր է համարում երկրորդ անգամն ա-
մուսնանալ։ Յաղթութիւնը տարան։

Պարոններ, միթէ դուք աւագակներ չէք...

Չարչիներ, վաշխառուներ, մտավաճառներ, շա-
հագործէք ազատ միտքը, թունաւորեցէք կեան-
քը, վաճառեցէք ազնւութիւնը, իդէալը, վսեմը, և
ձեր բոլոր ստոր արարմունքները քողարկեցէք
գեղեցիկ շղարշով հաստանալու համար...

Խոզեր...

Լող տւէք ճահճի մէջ, տակնաքներից պոպկ
հիւսեցէք ձեր ճակատին գաղափարի դիմակի տակ
և ցեցերի նման կրծեցէք կեանքը և թունաւո-
րելով մարդկային միտքը, հասցրէք մարդկութիւ-
նը գաճաճութեան...

Փաստաքան... Մտքի սոսկալի վիժաճք...

Եւ այդ վիժաճքի զոհը, գեղեցկուհու ու-
ժասպառ եզը գնաց կնոջ մօտ բացատրութեան:
Նորա սենեակը մտաւ կատաղած: Այդ պահուն
գիցունին մի ջահիլ պարոնի հետ սիրոյ Աստու-
ծունուն զոհ էր մատուցանում...

— «Անամօթ»... Պայթեց ատրճանակը...

Կովը բառաչեց...

Խեղճ անատամ եզ... Այո, դու պարտաւոր
ես ենթարկել տիրող կարգերին, նրա վճռին ու
քամել ամբոխի սրըագործած մշմարտութեան
մրուրը...

Աքսոր...

Ամբոխային մտքի վիժաճքի զոհ... Չարու-
թեան աղբիւրը ցամաքեցնելու փոխարէն՝ ծա-
րաւի արուին էր գնդակահարել...

Վերջաբան:

Գեղեցկուհին այժմ ամեն գիշեր փողոցումն
էր... Նա որսկան շներ էր որոնում...

Հացի խնդիր...

Առաջ...

Բնական պահանջ...

Նեխւած ուղեղներ...

Վերջը...

Դժբախտութիւնների մի շարք...

Հետեանքը...

Ձեր բուրժուական օրէնքները...

Սովորոյթ-Օրէնք—մարդկային մտքից ծն-
ւած արիւնարբու սարգ, որի մետաքսահիւս ցան-

ցի խոռոչներում ինքը ստեղծողն է արնաքամ
դառնում և իսկական մտքի ստեղծագործութեան
և յառաջագիմութեան խոչնդոտ հանդիսանում...

Սովորոյթ-Օրէնք—մտքի վիժաճք, տափակ
գապանակ, որի ճիւղաններում ազատ մտքի թը-
ռիչքներն են հիւծւում, մեռնում...

Սովորոյթ-օրէնք—կոպիտ պատնէշ, որ ստեղ-
ծագործող մտքի հոսանքն է լճացնում, դարե-
ւով նեխում և գարշ հոտերով լցնելով մարդկա-
յին գեղեցիկ պարտէզը, անուշաբոյր մտքի վեր-
ջին ծաղիկները որպէս Հարմադան քամի տոչո-
րում, այրում և մարդկային կեանքը դարձնում
հրակէզ անապատ...

Սկզբունք... Ո՞ւմ համար, գազանների...
Օրէնք... Ո՞ւմ համար, քեզ նմանների... Սակայն
ինչո՞ւ է այդ տանջանքը... Ողորմելի մարդկու-
թիւն, մտածիր միջոցներ, որ մարդիկ պատժե-
ւու կարիք չունենան... Մի թունաւորիւր կեանքը
և բժշկութեան կարիք չի լինիլ... Գոյութեան
կուռ համար, ֆիզիքական ուժն ու մտքի ճար-
պիկութիւնը մի փառաբանիր, այլ զինիր ամբողջ
մարդկութիւնը ճշմարտութեան գէնքերով և քո
այդ բոլոր յիմար կարգերը կրմեռնեն յաւի-
տեան...

Ինչի՞ համար են քո համալսարանները, դրպ-
րոցները, բանտերը... Ինչի՞ համար են քո կա-
խաղանները... Ինչի՞ համար են քո թնդանօթ-
ները... Ապրելու համար... Բայց միթէ նա ի-
րաւունք չունի քեզ նման ապրելու... Ի՞նչ իրա-

ւունքով դու խլում ես քեզ նմանից նրա կեանքը—հացը... Գաճաճ մարդկութիւն, դու այդպիսով գերեզման ես իջնում... Ըմբռնիր վերջապէս ողորմելի արարած, բնութիւնը ամենքին էլ միանման ստամոքս ու որկոր է շնորհել: Որոշիւր հանուր մարդկութեան որկորի մ'ընկմամբ պահանջը... Ահա քեզ օրէնք... Ստեղծագործիր այդ...

Էլ կարիք չի լինիլ բո պատիժների, որոնք դրախտ կեանքը դարձրել են դժոխք... Ստեղծիր մի օրինադիրք, որի մէջ երեք գլխաւոր յօդւած լինի միայն:

Մտքի ստեղծագործութեան ազատութիւն...

Ստամոքսի կատարեալ հաւասարութիւն...

Փոխադարձ հաւանութեամբ բեղմնատուութիւն...

Դուք երկի ծիծաղում էք... Խնդացէք խելօքներ... Խելագարին հասկանալու համար, նախ խելագարւել է հարկաւոր և միմիայն այն ժամանակ կըմբռնէք այդ Նրորորդութեան ճշմարտութիւնը, որը ձեզ նման խելօքները բարդացնելով մարդկային կեանքը՝ դարձրել են դժոխք...



XIV



Ի ընտանիքումն եմ: Ահագին հարստութիւն: Ճոխ, փարթամ ու շռայլ կեանք: Յաղթանդամ ջլոտ պարոն, հաստ ու թխլիկ կնոջ հետ: Աղջիկ զաւակ-միակը: Իրարից ծածուկ ազատ բարքերի երկրպագու ամուսիններ... Հասարակութեան մէջ պատիւ, յարգանք... Բարեգործական ասպարէզում դափնիներ... Ընտանիքում լուսթիւն...

Նու դու կեանք, լուսթիւն եմ թովիչ... Արտաքինից հմայիչ ու կախարդիչ, ներքուստ բացիլներով լի մի նեխում մահի՞ծ...

Ամառ է...

Կինը գնաց հայրենիք ամառանոց, իսկ պարոնս գէպի հանքային ջրեր: Վերջինս բարակին յատուկ հոտառութիւնով գտել էր ոսի բունը:

Հանքային ջրեր... Գեղեցիկ ու շքեղ պարտէզներ... Գրաւիչ զբօսավայրեր... Երաժշտութիւն... Հաստ ու հագուկ, բարձր ու ցածր բազմաթիւ գեղեցկուհիներ պճնւած ու զուգւած միշտ զբօսնելիս այդ սիրաբուխ վայրում... Գեղեցիկ մանրի վաճառատուն... Ո՞չ... Ա՛յո... Կուրացած մարդկութիւն... Փթիր, նեխիր, ժահրոտ թարախների մէջ—մաքսը ու վճիտ ջրերում...

Պարոնս բայլում էր էլէքտրական լուսով

փայլող ծառուղիներով... Հասաւ մինչև ծայրը: Այնտեղ մութ էր: Գիշերային հարսերը, վա-
տում էին այնտեղ, որպէս չղջիկներ, իսկ քա-
րակները, որպէս փշեր, ատամները սրած, նորանց
գեղեցիկ ու նախշունիկ թևիկները ծակում, որ-
սում, նայում, տնդում, գուրգուրում, նորից
բաց թողնում և այդպէս անվերջ...

—Պարոն, շշնջաց զուգում գիշերային մի
հարս մութ անկիւնից պարոնիս, որը համարեա
թէ կորել էր խաւարի մէջ...—հաւատացէք, այ-
սօր ամբողջ օրը ոչինչ չեմ կերել... Դուք, ա-
ղաչում եմ, եղէք համբերող և լսեցէք ինձ... Այն
անիծւի այս կեանքը... Մի օր տրաքւելուն չափ
կուշտ, մի օր քաղցած և այն էլ առանց մի կո-
պէկի... Եթէ կարելի է շնորհեցէք ինձ մի բուր-
դի և հաւատացէք կը վերադարձնեմ... Եւ գիշե-
րային պճնազարդ նազելի հարսը համարեա թէ
հեկեկում էր...—Ամուսինս հարուստ էր... Փուշ
ու գետն կեանքը նրա ամբողջ հարստութիւնը
կլանեց, իսկ ես այսօր»,... Եւ նա սկսեց լալ...

Պարոնս հետեց այդ կնոջ: Կինը առաջնոր-
դեց նրան: Կնոջ ամուսինը իր ամուսնաթող քրոջ
հետ շատ սիրալիր հանգիպեցին որսկան հիւրին:
Կերուխում... Նեկտար գինի... համադամ ճաշեր...
Շքեղ ընթրիքներ... Պարոնս ոչինչ չէր խնայում...
Արբեցութիւն... Ուղեղի բաց դռներ... Բարակի
փալող ատամներ... Երկու էգերն էլ այժմ զիզի-
ների մէջ... Գեղեցկունու ազատամիտ ամուսնու
դատողութիւններ... Յղապացած տիրասէր գամփո

պարոնիս շարժուն պոչ... Սրունների կատաղի
կռիւ... Պարոնիս ընկերացել էր և՛ մի ուրիշ քա-
րակ զարգացած հոտառութիւնով սիրազեղուն
գեղեցիկ տիկնոջ շնորհով... Սրա իդէալն էր
սէր... Ձեր պաշտած սէրը, պարոններ... Ոսկի-
ներ, անվերջ ոսկիներ... Սիրոյ ամենամեծ գրա-
ւականը... Եւ նոր պարոնը այդ քանալի ոսկի-
ներից ունէր շատ ու շատ... Եւ այդ ոսկին սի-
րուն տանտիկնոջ գեղուն սրտի մէջ, սէր բոցա-
վառեց... Մէր, մինչև այն աստիճան, որ մի քա-
նի օրից յետոյ սիրազւարճ նոր պարոնի հետ
փախուստի դիմեց... Ամուսինը կատաղեց... Օռ-
նաց, կնձկնձաց... Ապա նա գլորեց իրեն ծով,
երբ տեսաւ, որ իրեն քաղց և մահ է սպառնում
գոյութեան կուր վերջին գէնքից զրկւելու պատ-
ճառով...

Օրէնսդիր քանքարներ, որն է ձեր այն յօդ-
ւածը, որին ենթարկւում են ազատամիտ ոճրա-
գործները...

հա հա հա հա...

Դուք ամենքդ էք այդպէս... Ո՞վ կը ցան-
կանայ լինել խելագար... Ոգորմելիներ, գարշե-
լի սողուններ, պապանձւեցէք ու գալարեցէք
ճահճի մէջ... Ազատ է կեանքը... Ազատութեան
սեղանի վրայ, բայց միք մոռանալ մորթել խե-
լագարին... Խելագար... Նեխւիր մարդկութիւն...
Մտքի թռիչքներով ապրողը՝ խելագար է...

Այնտեղ... Այնտեղ... երկնքում—աստղերի
վրայ, մեխւել է գաղտնիքը... Սլացիր խելագար...

Պոռմէթէօսի նման գողացիր երկնքից կրակը...
Հուր վառիր, քարացած, լեռ, ապառաժ սրտե-
րում և անարգանքի սիւնի վրան մեռիր խելա-
գար անուռով... Գիշատիչ բազէները թող յու-
ղարկաւորեն քեզ...

Ա՛խ, այս իմ տարօրինակ կտակը...

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Ծիծաղիր դու մարդ, միւսնոյն է դու կորած
ես... Ծիծաղիր, ախորժակով և կեանքդ կարկա-
տիր նեխած ու փթած լաթերով...

Սառնամանիք է... Դո՛ւ սնանկ ես... Դո՛ւ
մերկ ես... Դո՛ւ դատարկում ես...

Օ՛ անասուն, գազան մարդ, երբէք դու չես
հասունանալ, քանի որ քթիցդ դէնը չես ջանալ
տեսնիլ...

Երաժիշտ, նւագիր լուսթեան և մարդկային
ոչնչութեան մեղեդին... Դու չես խօսում... Շատ
բան ես ասում...

Մեղեդին՝ յաւիտենական լուսթեան... Մե-
ղեդին՝ մահւան... Խորհրդաւոր գաղտնիք... Մտքի
մեղեդի...

Ստեղծագործողն...

Մահ...

Աստուծո՛ւ...

Մտքի շղթաներ...

Հա՛, հա՛, հա՛, հա՛...

Եւ դո՛ւ, խճճւոր մարդկութիւն... Բո՛ւ կեան-
քը՝ սիրոյ կիրքն է... Իսկ քո բոլոր ստեղծագոր-
ծած օրէնքները քո այդ կրքոտ սիրոյ պոռնիկ ե-
րաժշտութիւնը...



մառանոց եկած պարոնս այժմ
սկսեց ծովը զլորած պարոնի
ամուսնաթող քրոջ հետ սէր եր-
գել... Դժբախտաբար վերջինս
արդէն զրկւել էր սէր բոցավա-
ռող մուսայից... Նա տգեղացել
էր:—Պարոնս սկսեց զգւել: Թողեց: Տգեղը դի-
մեց դատի: Բժշկական քննութիւն... Հաստատ-
ւեց: Պարոնիս ունեցած ըալստանից նա էլ էր
բաժին ստացել... Օրէնսդիր քանքարների մի
յօղւածի համաձայն, պարոնս ստիպւած էր տալ
նորան ապրուստի միջոց: Հիւժւող կինը սկսեց
ապրել փշրանքներով և իր վրէժը լուծել զանա-
զան ցեղի բարակներից իր բալասանից բաժին
հանելով նրանց... Պարոնս էլ դիմեց հանքային
ջրերը հաւաքւած պոռնիկ-անգղ ըժիշկներին...
Բժշկութիւն... Սողալով կեանք... Ախար ծածկ-
ւած է վարդագոյն շղարշով...

Եւ դու մարդ, բիւր տեսակ ախտեր ես ներ-
փակում պոռնիկ փիլիսոփաների ստեղծած ծիա-
ծանագոյն շղարշի տակ, իսկ ներքուստ փթո՛ւմ
նեխում եւ մարդկային սիկաւէտ զեղեցիկ մա-
զերը մահճի փոխարկում...

Ոճրագործ հանձարներ... Մինչև երբ այսպէս... Շքեղ ու փառաւոր հիւանդանոցներ... Ձրի բժշկութիւն... Անձնէր բժիշկներ պարարտ ոռնիկներով... Բարեգործութիւն... Մարդասիրութիւն...

Տարտարոսի գաւակներ, հերիք մոափէք թանձր խաւարի մէջ... Թողէք մարդկութիւնը առանց ողորմութեան... Թող նա ապրի իր դառն քրտինքով... Նրան հարկաւոր չէ ողորմութիւն... Հօգրի այդ ժահրոտ թոյնը... Միք ստեղծիլ կապանքներ նորա ինքնագիտակցութեան առաջ ձեր պօռնիկ հաստատութիւններով, յօդաւորներով և նա կազատուի մաշող կապանքից...

Կին, ապրիր ճակատիդ դառն քրտինքով... Աշխատանքի այդ բոլասանը ծծիր դու սրտանց և գոյութեան կուռում մի պահպանիր քո գոյութիւնը մասկաճառի խանութով... Մղիր դու պայքար նորանց դէմ, որոնք արուներ զիրկն են նետուում հացի համար... Քո կոչումն է բեղմնաւորել կեանքը... Դու այդ՝ գէնք մի վարձնիլ գոյութեան կուռում... Սիրիր աշխատանք... Ճակատի քրտինք... Օ, այն ժամանակ սէր ընկերական... Կուր մտքի ուժով...

Կին, աշխատիր... Քրտնիր... Սիրիր... Ստամոքսի հաւասարութիւնը պահանջում է աշխատանքի հաւասարութիւն... Ուրեմն սիրիր աշխատանքը... Եղիր ընկեր և այդ աշխատանքի հաւասարութիւնը կը ծնի իսկական սիրոյ հաւասարութիւն... Երջանիկ սիրոյ բեղմնաւորութիւնն

է այն հօգր քանային, որով պիտի բացւի էգօխտ ընտելեան զաղտնիքը եւ ժարդ արարածին առաջնորդէ դէպի կատարեալ անմահութիւն...

հա, հա, հա, հա...

Եւ այսօր հանքային ջրերի հրաշագեղ ճեմելիքում իմ վարագուրած պարոնս այդ երգն էր նւագում զիգիւներ իմէջ թովուող մի գեղեցկութիւն...

—Ահ պարոն, ինչքան գեղեցիկ բան է սիրոյ ազատութիւնը... Ահ, որքան դուք ազատամիտ էք, որ ձեր կնոջը տւել էք սիրոյ ազատութիւն... Այդպէս է վարել և իմ ամուսինը... Այո, ես միանգամայն համաձայն եմ ձեզ հետ, որ կեանքի երջանկութիւնը սիրոյ ազատութեան վէջն է...

—Ուրեմն թոյլ տւէք համբուրել ձեր այդ մեղրածոր շրթունքները, անմահ հրեշտակ... Եւ նա, որ նորա հետ նստած էր մթութեան մէջ նստարանի վրայ թեքւելով դէպի մանկահատակ կէնը, գրկեց նորա քնքոյշ նագուկ իրանը և տէնչոտ համբոյրը դրոշմեց գեղեցկութեան վարդագոյն տաք շրթունքներին...

Ատրճանակի որոտ... Իրարանցում... Գեղեցկութիւն մորթած աղաւնու նման թրփրտում էր վարդագոյն արեան մէջ... Ամբոխ... Ժխոր... Ոստիկաններ... Հարց ու փորձ...

—Ո՞վ ես դու, դիմեց ոստիկանապետը ատրճանակը ձեռքին կանգնած գեղեցկագէտ մի

երիտասարդի, որը դիւային հռոտոցով ծիծաղում էր իր գոհի վրայ...

— Այդ գեղեցիկ արարածի ամուսինն եմ ես...

Ամբոխը օռնաց...

— Բռնակալ... Ի՞նչ իրաւունքով... Մահ, գա-
զանին...

— Նա ինձ հետ չը կարողացաւ տանել աղ-
քատութիւնը... Խորտակեց նա իմ երջանկու-
թիւնը... Ես ապրել էի ուզում և ոչ սողալ ձեզ
նման...

— Դու իրաւունք չունիս... Օռնաց ամբոխը...

Դարձեալ ատրճանակի որոտ...

Երիտասարդը արնաթաթախ ընկաւ իր պաշ-
տած գեղեցկուհու դիակի վրայ: Նա գնդակահա-
րեց իրեն ուղիղ քունքից...

— Խեղճ... Օռնաց ամբոխը...

Ամբոխ, դու խրտուխակ ես, քամէլիօն, հակա-
սութիւնների մի ծահիճ... Անարգ սիւնին բեկիւր
նրանց, որոնք չեն ցանկանում քեզ հետ կռկռալ
ճահճի մէջ...

XVI



Պարոնս հանքային ջրերից վերա-
դարձաւ տուն: Վերադարձել էր և հաստամար-
մին կինը: Պարոնիս վարդագոյն շղարշը պատըռ-

ւեց նորից... Անգղների պօռնիկ բժշկութիւնը
նրան չը փրկեց... Նա անմահացաւ... Այժմ կիւր
սկսեց թագաւորել... Միակ աղջկան ամուսնաց-
րեց... Դուստրը մօր ազատութիւնն էր սիրում...
Երիտասարդ փեսան շլացել էր օժիտից... Կնոջ
ազատութիւնը դուր չեկաւ օժտասէր փեսային...
Գնդակահարութիւն... Դատ... Զօքանչի ցուցմուն-
քը ազատեց փեսային... Մայրը վկայեց իր հա-
րազատի ինքնասպանութեան ճշմարտութեան
մասին... Դատաւորները վճռեցին... Անմեղ է
ամուսինը...

Սակայն ի՞նչը ստիպեց զօքանչին մարդասէր
լինել...

Օ՛, փեսան փոխարինում էր աներին...

Դատաւորներ, դուք արդարադատութեան
կապիկներն էք... Ձեր օրէնքներով դուք մարդ-
կանց ստել էք սովորեցնում... Իսկ դու, արդա-
րութիւն որոնող ամբոխ, այդ սգրոճկների սննդա-
տու կով... Երկուսդ էլ արժէք իրար... Ծած-
կեցէք ձեր թարախոտ վէրքերը լաթերով, իսկ
խսկական արգարութիւն որոնողներին և ճշմար-
տութեան ուղին յարդողներին, նետիր քո շինած
լաքիւրին/ծոսի սև խոռոչները, իսկ այնտեղից դէպի
սնարգ կախաղան:

Ամբոխ, ինչո՞ւ մայրը իր հարազատի սպա-
նութիւնը ուրացաւ... Նա քո արիւնիցն էր... Ին-
չո՞ւ փեսան ազնւութիւն չունեցաւ ճշմարտու-
թիւնն ասել... Նա քո ոսկորիցն էր...

Այդ հրէշները, այդ գարշելի տականքները

փոխադարձ համաձայնութեան էին եկել... Փեսան
խօսք էր աւել կենակցել զօքանչի հետ իր փը-
կութեան համար... Իսկ զօքանչն ընտրեց չարի-
քից փոքրագոյնը... Նա չուզեց զրկուել իր նախ-
կին հոմանուց... Երկուսն էլ ապրել էին ուզում...

Գարշելի մարդիկ... Դուք ապրում էք...

Կոկոսացէք ուրքան կուզէք... Ձեր փրկու-
թիւնը ճանիճն է...

Փեսան այժմ տէր էր և հրամայող զօքանչի
ամբողջ կարողութեան... Հասարակութիւնը գո-
վում էր փեսային: որ այդպիսի մի նեխուող ըն-
տանիքում յայտնեցաւ մի պատւախնդիր մարդ,
որ աների օջախը աշխատում է վառ պահել...

Անցան տարիներ... Կրքի պառաւ տգրուկը
այլ ևս դուր չէր գալիս երիտասարդ փեսային...
Սիրոյ բանալի դեղին ոսկին սկսեց աջ ու ձախ
նետել ստամոքսին և զիզիներին գերի գեղեց-
կունիների առաջ... Կատաղեց պառաւ տգրուկը...
Վռնդեց նրան... Սպառնաց հին գաղտնիքը բա-
նալ, բայց տեսաւ, որ ուշ է այժմ... Բաւակա-
նացաւ փեսայի գլխոտոցով և վարձեց մի պա-
տանի կառավարիչ... Չար լեզուները երկարա-
ցան... Պատանի կառավարչի միտքն էր վաղ հա-
րըստանալ շահագործելով իր թարմութիւնն ու
գեղեցկութիւնը... Յնորք... Քաղցած փեսան մի
գիշեր ներս մտաւ զօքանչի սենեակը և կուլի
բռնելով պատանու կորստեան պատճառը դար-
ձաւ, ինքն էլ հետը... Չօքանչն ու պատանին
սպանեցին փեսային... Ծածկեցին:

Բացւեց գաղտնիքը: Պառաւն ազատեց փո-
ղի ուժով, իսկ պատանին բանտարկւեց, որտեղ
և թունաւորւելով մեռաւ մինչև քննութեան
օրը... Չօքանչը կաշառել էր բանտապետին: Սա-
կայն իսկական դրաման ամբողջը գիտէր... Գո-
վում էր նորա ճարպիկութիւնը...

— Հերոս է...

Այնմիտ ամբոխ, դու խմում ես թոյնով լի
բաժակը, բայց չես գիտակցում... Կանգնիր ար-
ժան հերոսին... Եւ քանի քանի արձաններ ես
կանգնել այդպիսի հերոսներին և անարգել իս-
կական հերոսի յիշատակը... Չարթիր, լեթար-
գիայից... Դու շարժւում ես միայն... Դու սո-
ղում ես... Բայց ապրում ես...



XVII

ս նորից սկսեցի սլանալ օդի
մէջ: Քամին տարաւ ինձ
նետեց մի գեղեցիկ պար-
տէզ, ուր խայտաբղէտ
տիկիներն ու փափկա-
սուն քնքոյշ օրիորդները
զբօսնելով սիգածեմ, աշ-
խատում էին արունների
ուշադրութիւնը գրաւել... Արու գամփոնները լոր-

ձուռնը թափելով բերաններից զիտում էին նորանց և օղալին անթել հեռագիրներ ուղարկում... Մի պարոն հասաւ նպատակին: Պատասխան ստացաւ մի նորափթիթ օրիորդից: Մօտեցան իրար, և իբրև վաղուցւան ծանօթներ սկսեցին զրուցել: Այդպէս էլ մտածեցին այնտեղ զբօսնողները: Հին երգն սկսեցին երգել: Սէր... Օրիորդը մի քանի անգամ ճլմկոտալուց յետոյ տւաւ իր համաձայնութիւնը, եթէ ծնողները չեն մերժիլ:

Համաձայնութիւն:

Պսակ... Շղթաներ...

Թխիկ աղանին՝ բարակի ճանկում...

* *

Նորափեսան հայրենիքից նամակ ստացաւ: Կինը օգնութիւն էր խնդրում... Եւ նա իւրաքանչիւր ամիս անհրաժեշտ փողն ուղարկում էր... Գաղտնիքը մերկացաւ... Դատ: Երկու դժբախտ կանայք իրար հանդէպ... Արցունք, տանջանք... Խիստ դատաստան... Բանտ...

— Պարոն դատաւորներ... Ես անգործ էի... Կինս, երեխաներս մերկ ու քաղցած... Երկրորդ անգամ ամուսնացայ և վերջին կնոջս փողից սկսեցի բաժին հանել զաւակներին... Վերջին կինս հարուստ էր... Ձէի կարող աւագակութիւն անել... Հաւատացէք, այժմ ես երջանիկ կապրեմ, եթէ երկրորդ կինս համաձայն էր ինձ հետ, ընդունել նախկին կնոջս զաւակներին հետ... Իմ կինս յանուն իր զաւակների պատրաստ է տանել ամեն ինչ...

— Այո, պարոն դատաւորներ, ես դէմ չեմ... Օ՛, եթէ դուք տեսնէիք իմ երեխաներս հացի համար ինչպէս էին լալիս... Ներեցէք նրանց հօրը... Նա ցանկացել է սովից ազատել իմ զաւակներին... Այդ կինը ոչինչ չէ կորցնում... Ամուսնոյս ես զիջում եմ նրան, միայն թոյլ տան...

— Ոչ պարոն դատաւորներ, պատժել... Նա ինձ անբախտացրեց... Այլ ևս նրան ես չեմ ուզում... Այդ ստոր մարդուն:

Օրէնքի հիման վրայ խիստ պատժել...

Եւ դատաւորները հետեւալ վճիռն արձակեցին: «Ամուսիններ Ս. և Ա. Ուլեանները ինչպէս դատական քննութիւնը հաստատեց, փոխադարձ համաձայնութեամբ են կատարել այս քրէական գործը, ուստի երկրորդ կնոջ իրաւունք տալ նոր ամուսնութեան, իսկ ամուսիններ Ուլիաններին ուղարկել կալանաւորների բաժինը մի մի տարի ժամանակով...»

Վերջացաւ:

Կո՛յր մարդ... Օրէնք մշակիր...

* *

Նոյն պարտէզն է... Հրաշալի գարնանային երեկոյ... բոլորակ լուսինը սահում էր մեղմիկ... Վխտում էին պարտիզում քնքոյշ արարածներ... Անթիւ են նորանք... նորանց փառահեղ պողոտա զարդը աչք էր շլացնում... Դորանց յետեից շաւրան շարան անցնում էին բարակներ տարբեր զարգացած հոտառութիւնով... նրանք մէկ մէկ

մօտենում էին այդ չքնաղ կանանց և սէր առաջարկում... Սէր... Հասկանում էք... Սէր...

Վայելուչ հագնւած մի պարոն մօտեցաւ մի գեղեցկուհու...

— Կէս գիշեր է արդէն... Իսկ դու ոչ մէկին չը ճարեցիր...

— Ի՞նչ անել... Տեսնում ես որքան շատ են... Երիտասարդներին իրար ձեռքից են խլում...

— Իսկ չէ՞ որ դու գեղեցիկ ես...

— Իսկ չէ՞ որ ես թանկ եմ գնահատում...

— Ոչինչ, համաձայնիր:

Այդ պարոնը օրիորդի գեղեցկութիւնը շահագործողն էր... Օրիորդը սոսկում էր «հասարակաց տան» անունից և չէր ուզում մնալ այնտեղ և վաճառել, իսկ դուրսը հալածւում էր... հանգամանքներից ստիպւած և օրէնքներից պաշտպանելու նպատակով այդ պարոնի հովանաւորութեան տակ մտած, թէ ինքն էր ապրում և թէ պարագիտին ապրեցնում...

Լպիրշ մարդ... Սոսկա... իրականութիւն է այս... Եւ դորանց թիւը լէզէ՞ծն է... Կարմիր մարդ... Քո ստեղծագործութիւններն այսպիսի չարիքներ են ծնում և ողջ մարդկութիւնը այլասեռում...

Հա, հա, հա, հա...

Միթէ այդ օրէնքներով ես զանազանւում անստուններից...

Պարտիզի միւս անկիւնում հաւաքւել են մի խումբ բարակներ...

— Դու յղի ես... Այդ լաւ փաստ է...

Նրան կարելի է շահագործել... Դու կը պնդես, որ արգանդիդ պտուղը նրանիցն է... Նա դիրքով մարդ է... իր պատւի համար նա քո բոլոր պահանջները ստիպւած պիտի կատարէ...

Պատիւ... իմացիր ու սոսկա... Սրբագործւած է պատիւը... Եւ պատւի համար այն պարոնը պիտի տուժէ...

Գիշերային օրիորդը գործում է...

Այն պարոնը կորցրել է գլուխը... Նա շարել է... Նա չէ ցանկանում, որ հասարակութիւնն իմանայ... Նա չէ ցանկանում դատի դիմել, չը նայած համոզւած է, որ ինքը պէտք է արդարանայ...

Վկաներ են կանգնել...

Դատ է ընկերական...

Պարոնը վերջին կոպէկն է տալիս...

— Ամուսնացիր... Որոշում է դատը...

— Ես մեղաւոր չեմ... Այդ օրիորդը վաճառում էր... Ես առաջինը չեմ և ոչ վերջինը... Նորա արգանդի պտուղը միթէ հնաբաւոր է որոշել ուճիցն է...

— Վկաներ կան... Պիտի տուժես... Օրէնքը այդ ընդունում է...

— Եթէ ստում են վկաները...

— Վկաներին երդումով են հարցնում...

Երդում... Եւ քո բոլոր օրէնքների հիմաքարը երդումն է ողորմելի մարդ... Երդում... Պարոնը յուսահատւել է... վճռում է մերժել...

Պետական դատ... վկաները երդումով ցուց-
նումը են տալիս... Պարոնի ուղեղը այլ ևս չէ
գործում... Նա ատրճանակը դէպի բունքն է տա-
նում... Նա գլորւում է դիապաստ...

Եւ մարդիկ նրան գերեզմանատուն են տա-
նում... Դու, գերեզմանատո՛ւն ես, մարդկութիւն...
Քո ըլոր սրբագործւած սովորութիւնները ոճրա-
գործութիւն... Ամբոխի օրէնքն է, որ ոճիր է
ծնում... Երեւի ծիծաղում էք... Ո՞վ չէ խնդում
խելագարի և նրա օրէնքների վրայ...

Եւ ես մի ընտանեկան երեկոյթումն եմ:
Երկու սեռի ահագին բազմութիւն: Սիրոյ խան-
դավառ կռիւ: Մրցումն հսկայական: Տաք խօ-
սակցութիւններ... Բուրժուական բարոյականու-
թիւն...

Անկիւնում նստած մի զոյգ այդ բարոյա-
կանութեան մասին էր զրուցում:

— «Հոգիս, պնդում էր մի գեղեցկադէմ ե-
րիտասարդ, — անհատներն են, որ ամբոխին ու-
ղիներ են ցոյց տալիս: Դու չես սիրում քո ա-
մուսնուն... Ձեր երկուսի մէջ մեծ խրա-
մատ կայ ընկած: Նա վաճառական է և այդ դասի
բռունցքի ներկայացուցիչ... Միթէ, նա կարող է
ըմբռնել քեզ...»

— «Ա՛խ Գրիշա, փրկիր ինձ... Եւ նա
իր սևորակ աչքերը յառելով երիտասարդի
աչքերին՝ արտայայտեց իր սիրոյ ամբողջ թա-
փը... Ես քոնն եմ... Ես թքել եմ հասարակա-
կան կարծիքի վրայ... Մենք կապրենք իրար հետ
և ցոյց կըտանք այդ ամբոխին, որ առանց ա-

պահարզանի կայ և՛ սիրոյ ամուսնութիւն...»

Եւ նրանք ամուսնացան սիրով:

Անցան ամիսներ: Եկեղեցին չարիքից փոք-
րագոյնն ընտրեց, նամանաւանդ սիրուն տիկի-
նը աչքի ընկնող հոգևորականի զաւակ էր...

Սողուններ, օրէնքը միմիայն թոյլերի հա-
մար է... Եւ եկեղեցական օրէնսդիր սողունների
ջատագով խլուրտները, ոչ օրինակ այլոց թոյլ
տւին սիրուն կնոջը նոր ամուսնութիւն:

Երիտասարդն ու տիկինը մտան այժմ եկե-
ղեցի... Սիրոյ վայելումն...

* *

— «Դու, որ այդքան ստոր արարած էիր,
ինչո՞ւ ինձ նման ազնիւ գաղափարով տոգորւած
մի ամուրի երիտասարդի դժբախտութեան պատ-
ճառ դարձար... Եւ նա սկսեց մանկան նման
արտասուք թափել... — Դու ինձ էլ դաւաճանե-
ցիր... Ուրեմն...»

— «Ուրեմն դու քեզ համար, ես ինձ հա-
մար...» Եւ գեղեցիկ կինը թողեց սիրած երի-
տասարդին: Երիտասարդը, որ իր գրչով ամբո-
խի համար փրկութեան ուղիներ էր հարթում,
ատրճանակը դէպի բունքն ուղղեց և դրանով
ուզեց պատժել անազնիւ ընկերուհուն:

Հետեւեալ օրը ամբողջ մամուլն օճաջ...
Մամուլ... Զսաներորդ դարի փողոցային կին...
Երկու օրից յետոյ մոռացաւ իր գրչի զինուորին,
և չուզեց դրամայի վաբագոյրը բարձրացնել...

Իսկ ինքնասպանի կինը կոկորդիլոսի ար-

ցունքն աչքերին դուգւեց սեւերի մէջ...

—«Այս անգամ դու արդէն փէրիի ես նման: Եւ ամենահարուստ փեսացու կը գտնես»...

—«Մանեա, Մանեա, արդէն Սաշան խնդրել է ձեռքս... Բայց ամօթ է այսպէս շուտ պսակել: Կըբամբասեն»...

Թունաւոր իժ...

Քո ժահրոտ հողին ծածկիր ամբոխի վարագոյրով և սողա գարշ գործերի մէջ: Կին, դու ես երջանկութեան բանալին... Ինչո՞ւ զիզիների համար անասուն դարձար...

Ա՛խ, որքան ցանկալի էր նորից մարդանայի, այդ կնոջը՝ ես էլ իմ երգը երգէի:

Եւ քանի երգիչներ գերեզման իջան իդէալական սիրով, բայց ստամոքսի սէրը մնաց կեանքի մէջ և կանանց կուռքը դարձաւ:

Կնոք մարդկութիւն... Քո կեանքը երբէք չի լինիլ երջանիկ, քանի որ երջանկութեան բանալին ժանգոտ կմնայ...

* *

—Դու լսեցիր, ինչպէս են մեր բարձերն ապականւել, որ գրչի մարդն էլ զոհ գնաց ամբոխի օրէնքին»...

—«Է՛հ, եղբայր, լաւ ազատւեց նա սողալուց... Գրչի մարդ... Դա ծաղր է բարեկամ: Նիցշէի գեր-մարդուն՝ միմիայն մահով կը հասնես: Եւ ես կողմնակից եմ նիցշէականութեան»:

Ողորմելիներ, և դձեք էք ամբոխի առաջնորդը... Եսը ու գոյութեան կռիւը ձեզ կաշկան-

դել են և գրականութիւնը դարձրել էք մի գէնք ձեր անմիտ կեանքը երկարեցնելու համար... Դձեք ապրել էք ուզում... Սակայն այդ ձեզ իրաւունք չէ տալիս մտքի տաճարը սրբապղծելու:

Գրական վանդալներ, դուք ազատ ուղին պատնէշեցիք... Գրչի իսկական զինւորներին ձեր եսփունջաւոր դաստիարակներով խողխողեցիք և յանուն գաղափարի կոյր ամբոխին կթելով ճարպակացեցիք...

Հա, հա, հա, հա... Ատամները փայլեցըն... Վիրաւոր առջի նման, որքան կուգէք խոտերը պոկոտէք: Ես ազատ եմ... Ես խելագար եմ... Ես փոշի եմ...

Օ՛, մարդ, դու մի միմոս կապիկ ես կեանքի հնոցում, քանի որ անյազ ստամոքսդ չի զանազանւել գազանների ստամոքսից... Ապրելու համար մի շահագործիր գեր-մարդու իդէալը... Մեռիր... Ոչնչացիր... Փոշի դարձիր... Եթէ ոչ մի օր օդն էլ կը շահագործես և քեզ նմաններին անօդ կը թողնես...

* *

Հասարակական ժողովարան: Փափկասուն տիկիներ... Զւարճութիւն... Ուրախութիւն... Պարեր... Շքեղ ընթրիքներ... Անվստահելի մարդկանց մոտքը արգելւած է... Ոչ անդամների համար՝ անդամների երաշխաւորութիւն... Գեղեցիկ ծառուղիներում մաքուր վարքի ու քարքի տէր անդամներն ու նրանց ունիւններն են վիտուս...

Երաժշտութիւն...

Նրեշտակներն այդ բանակը փայլում է մաքուր և անբիծ...

—Հոգիս, դու տո՞ւն ես գնում... Ես մի ժամից կը գամ... Յանկանում եմ քիչ էլ երաժշտութիւնը լսել...

—Սօսեա, բայց չուշանաս... Չուշանաս սիրելիս... Այսօր շատ աշխատելուց յոգնած եմ խիստ...

Եւ այդ անդամը կնոջը թողնելով, դուրս գնաց ժողովարանից:

—Սօսիւ՛... Մօտեցաւ նորան մի այլ անդամ:

—Սերիօժ:՛ն...

—Գնաց...

—Գնաց...

—Ուրեմն...

—Այո՛...

—Եւ նրանք նստեցին սեղանի շուրջը ու սկսեցին ընթերել ու խմել...

Անբիծ անդամ և մաքուր անդամունի...

Ապա կառք... Դէպի հիւրանոց...

Սէր...

Անբիծներ...

Անամօթներ, ո՞ւմ խաբեցիք... Բայց միք մոռանալ միջադրել նրանց, որոնք ձեր արարմունքները բացայայտ են կատարում... Փարիսեցի կեղծաւորներ... Վերջինները ձեզնից ազնիւ են... Ձեր վէրքն աւելի ժահրոտ է...

Ժահրոտ մարդկութիւն...

Վիրահատներին խաչէր... Կախիր անարգ

սիւնից... Այրի՛ր... Դո բոլոր գազիր արարմունքները ներփակիր սովորութիւնների հարմոնիայով և ապրիր արտաքուստ առողջ, բայց ներքուստ նեխած և քարշ տուր քո անմիտ գոյութիւնը, որպէս մի սոսկալի թիւրիմացութիւն...



XVIII

Ու քամին, նորից ինձ կեանք տւաւ... Սլանում եմ... Ահա առջեւ է մի փարթամ քաղաք... Հսկայական ապարանքներ... Փառահեղ փողոցներ... Մարդկանց ծով... Ներս մտայ մի վիթխարի ապարանք, ուր ապրում էր հրամայողը իր նմանների... Նրան շրջապատել են ձրիակերներ և ստամոքսի յառաջադիմութիւնը տքնում են իր գազաթնակէտին հասցնել...

Գիշեր ցերեկ միջոցներ են մշակում, կաշւից դուրս գալիս և ստամոքսի աղբիւրը տքնում մշտնջենական դարձնել... Գործում է հսկայ մեքենան... Եւ այդ մեքենայի ամուր պտուտակները ճնշելով անթիւ ստամոքսներ, բիւրեղացած սննունդը—ոսկին դէպի այդ վիթխարի կենդրոնը մղում և անկուշտ Հիդրայի և նրա արբանեակների անկուշտ որկորը լցնում...

Եռում է կեանքը... Փայլում է կեանքը...
Ինչ որ օրէնքով արգելւում էր ուրիշներին, այս-
տեղ օրինաւոր է...

Ստամբուլի մեքենան ապահովուած է ամ-
բոխի կոպիտ ոյժով... Մտքի թռիչքների հետ
նրանք գործ չունեն... Նրանց իդէալը սէրն է...
Եւ նրանք սիրում են ամենաընտիր չնաշխարհիկ
գեղեցկուհիներին հողագնդի ամեն տեսակի ցեղե-
րից հաւաքած...

Գեղեցկուհիները ոսկիների, մարգարիտնե-
րի գոհարների մէջ կորած սէր են վառում չիդ-
րայի կրծքի մէջ երբեմն չը մոռանալով և նրան
չը ջապատող պնակալէզներին...

Մի օր սողունների այդ թագաւորութիւնը
ցնցւեց... Խելագարի մէկը համարձակել էր չիդ-
րայի հսկայ մեքենան դարձնել ամենքի սեփա-
կանութիւն... Ամբոխը հետևելով այդ խելագա-
րին մի-ահուելի ցնցումով փոթորկել էր կեանքի
սովորական խաղաղ հոսանքը... Սակայն իր այդ
մարգարէին շուտով դաւաճանեց և սկսեց բղաւել-

— Խաչել նրան... Խաչել խելագարին...

Եւ նա շղթայակապ ընկած էր բանտում:
Բայց սողունների թագաւորութեան վրան թո-
ղած սարսափը դեռ չէր անցել... Հետաքրքրե-
ցին: Եւ շղթայակապ խելագարից պահանջեցին
խօսել այն, ինչ որ խօսել էր ամբոխի մէջ և ի-
րանց քաղցր քունը խանգարել: Վիթխարի ապա-
րանքի բնակիչները շրջապատեցին նրան: Այդ

խելագարը սովորական մի մարդ էր: Գերբնական
չէր նրա ծագումը...

Նա մարդկութեան մի անդամ էր մտքի թը-
ռիչքներով, որի համար և նա խաչ պիտի հան-
ւի: Ու նա սկսեց:



XIX

Դ՛հ, ուզում ես իմանալ իմ յան-
ցանքը... Իմ մեղքը մարդկութեան
թշւառութիւնն է... Եթէ ապ-
րում ես, օգուտ պէտք է բե-
րես մարդկութեան՝ ցոյց տալով նրան ճշմարտու-
թեան ճանապարհը... Ուստի, իւրաքանչիւր ոք
պարտաւոր է աշխատակցել մի մեծ գործի պար-
գաբանութեան, որին բնութիւն ենք ասում, որ
թշւառ մարդը, դառնայ երջանիկ մարդ... Ես
ոչ Աստուած եմ և ոչ նրա Որդին կամ Մարգա-
րէն... Ես մարդու հսկայայական մտքի վերջին
թռիչքն եմ... Եւ աշխարհ դալով չը ցանկացայ
լրացնել... Ես չեմ ուզում ուրիշների նման կար-
կատանով զբաղւել... Կարկատել մի հսկայ շի-
նութիւն, կը նշանակէ մահւան դատապարտել
նրա բնակիչներին... Ես կը քանդեմ քարացած

մտքի այդ դարձումը գործեան հանգույցը ու կը դնեմ մի-նոր շինութեան առաջին անկիւնաքարը... Ես չեմ սարսափում, որ ինչ դէպի անարգ մե սիւնը կ'ուղարկեն... Եւ երբէք յարութիւն էլ չըպէտք է առնեմ, որովհետեւ իմ անդը գերեզմանային կեանքը հարմոնական փոշու մի հիւլէ է— յօգուտ նորանոր թեղմանաւորութիւնների...

Առհասարակ կրօնի մեծ ընթացմատօրները սկիզբ են առնում գերբնականից — Անհասանելի մտքերի քննացումից և ազդելով տափակամիտների վրայ, ստեղծում հաւատացողների մի հոծ բազմութիւն: Եւ ահա նոր վարդապետութիւնը սկսում է նւաճումներ անել... — Աստուծոյ տեղ առամ — ապաց Մովսէսը: — Սիրիր ընկերիդ, ինչպէս քո անձը, նոյն չափով թշնամուդ անգամ, քարոզեց Յիսուսը... Մահամեղէն էլ իր երգը երգեց... Իսկ խոր արևելքում, կրօնների այդ որորանում, դարեր առաջ՝ Կոնֆուցիոսն ու Բուդդան իրանցն ասացին...

Դրանցից իւրաքանչիւրը՝ նկարագրեց իր Աստծուն իր հասկացողութեամբ, այսինքն իր մտքի քարացման կէտը իր հետեւողների համար Աստուած յորջորջեց...

Այդպէս էփօլիւցեայի ամեն մի շրջան ունեցաւ իր բերան — մարդորէն յանձին կարող մտքի տէր մարդկանց... Եւ այդ շրջանները անվերջ են և անհատ, քանի՜ հողագնդի վրայ կրեռայ մտաւոր կեանքը... Ահա հէնց այդ ծնեց տեսակ, տեսակ մարդիկ, որոնցից մի քանիսը

մտքի հսկայական թռիչք գործելով ընկան քարացման կէտին... Միտքը անգոր էր, գիտութիւնը տկար... Իսկ բնութիւնը իր անթիւ գաղտնիքներով հարցեր է տալիս մարդու ուղեղին... Հարկաւոր է պատասխան գտնել... Եւ այդ մարդիկ իրենց հասկացողութեամբ ստեղծելով անբոնելի և անհասանելի լաւագոյն գաղափարներ իրենցից համարեցին զանազան մատեաններով մեզ տալիս: Եւ մարդիկ հիանալով նրանց հանճարեղ մտքի վրայ, Մեծ փիլիսոփայ, Աստուծոյ մարգարէ կամ Նրա Որդին դաւանեցին...

Եկան այլ մարդիկ... Դեկարտ, Ապինոզա, Բէկոն, Նիւթոն, Լոկի, Միլլ, Դարվին... Սրանք այլ կերպ սկսեցին մօտենալ այդ հզօր նախապատճառին... Եւ միտքի քանդակ հաստատիւր մատեանների փոխարէն նրանք մեզ տալիս իրենց երևոյթների, բնութեան գաղտնիքների փաստաբերկոյթների, բնութեան գաղտնիքների փաստաբերկոյթների... Սրանք ամենքը մարդկային մտքի լից քննումն... Սրանք ամենքը մարդկային մտքի անգորութիւնը չըհամարձակեցին ստեղծող անւանել: Ու այդպէս դարեր շարունակ քանի մարդկային միտքը յառաջադիմել է փոփոխել և նրա հաւատալիքները նրա Աստուծոյն... Հետեւաբար մարդկային մտքի անգորութիւնը Աստուած դաւանել... Բայց միթէ այժմեան մտքի անգորութիւնը անփոփոխ պիտի մնայ... Ոչ, այդ հսկայ գործի համար, դարերը վայրկեաններ են... Ես չեմ ուզում մանրամասնութիւնների մէջ մտնել և մտքիս թռիչքների ճշմարտութիւնը բացատրել, հակառակ դէպքում, նշանակում է

մտքի յառաջադիմութիւնը չընդունել... — Հասկացարդու, ով է իմ Աստուածը... Մարդկութեան մտքի վերջին թռիչքը...

Այդ իմ Աստուածը չար, ռիսերիմ և վրէժխնդիր չէ Մովսէսի Աստուծոյ նման... Եւ ոչ դրանց խառնուրդը՝ Մահամմէտի և միւս մարգարէների Աստուծոյ նման...

Նա մէկ է... Եւ մէկ էլ պիտի մնայ յաւիտեան: Նա չէ սիրում և չէ ընդունում ոչ մի ծէս... Ոչ աղօթք, ոչ ծում, ոչ պաս, ոչ մում, ոչ ողջակէզ, ոչ արիւն... Նա ամեն ըոպէ մեզ հետ է... Նա մեր գանգուսն է... Ու նա ամենայն տեղ է... Նրան ճանաչողները տարբերում են միւսներից առողջ ուղեղի թռիչքներով...

Դիմիր դու նրան. ի՞նչ անել, որ բոլոր մարդիկ ապրեն երջանիկ... Դրա համար միջնորդ բանանայ չէ հարկաւոր... Նա բնակւում է քո գանգուսն... Եթէ անգոր է գանգո, զինիր դու նրան մտքի ստեղծագործութիւններով և դու իսկոյն պատասխանը ստանալով կը գտնես երջանկութեան ճշմարիտ ուղին...

Ով որ տգէտ է, նա ապրում է դժոգքի մէջ... Հասուն մարդուն Աստուած քաղցած չի թողնում... Եթէ դու հասուն ես, ուրեմն դու կուշտ ես-արքայութեան մէջը...

Մտածիր ազատ... Մտածիր այնպէս, որ քեզ նմաններին գաւեր չընիւթես... Մտածիր ազատ... Քո Աստուածը ազատութիւնն է սիրում... Ազատ ես... Ապրեցրու քեզ նմաններին... Որովհետեւ

քեզնից թոյլերի համար դու մի Աստուած ես...

Ի չարը մի գործ դնիր քո ձիրքը, քո մտքի ուժը, իմացիր, որ քեզանից աւելի հզօրն էլ կայ. եթէ նա էլ քեզ նման վարւի, դու կը տուժես: Տուժելը, անհաւասարութիւն է, հետեանքը դժոգք...

Հաւատացիր քո կոշման, որ դու թագաւոր ես մտքիդ հզօրութեամբ բոլոր երկրի վրայ. բայց տանջել քեզ նմաններին՝ անիրաւութիւն է, որովհետեւ դու ստորացնում ես այն Աստուծուն, որը գործում է քո՝ և նրա մէջ...

Յարգիր ամենքին. այդ է թելադրում Աստուածը քո մէջ. եթէ այդ անել չը կարողացար, ուրեմն դու մտքով կոյր ես... Դիմիր բժշկին-կրթութեան... Առօրեայ հոգսերը շատ անգամ ընկճում են քեզ և դու հացի պատճառով անում ես սխալմունքներ... Ուղղել սխալը՝ ազնուութիւն է, իսկ կրկնելը՝ մահ... Եթէ մեռար, վերջացաւ ամեն ինչ. դու կորած ես: Աշխատիր չը մեռնել:

Քո միտքը կարող է քեզ դարձնել անմահ, եթէ ողջ մարդկութեան մտքի կատարելիութիւնը պարտադիր դարձնես քեզ համար...

Եթէ բոլորդ մարդկային մտքի կատարելիութիւնը պարտադիր դարձնէք, այն ժամանակ բոլորդ կը դառնաք մի ընտանիքի հարազատ գաւակներ...

Իւրաքանչիւր ազգ բազմաթիւ ընտանիք ունի իր մի գումար է: Իւրաքանչիւր ընտանիք ունի իր հայրը, որը իր գաւակներին երբէք թոյն չէ տալիս, կամ մէկին կուշտ պահում՝ միւսին քաղցած:

Իւրաքանչիւր ազգ այդպիսի հայրեր պիտի ունենայ, որոնք արդար կերպով իւրաքանչիւրիդ ձիրքի համաձայն գոյութեան կուրի անհրաժեշտ նիւթը վաստակելու գործ պիտի տան և իւրաքանչիւրիդ տալով մարդավայել համահաւասար ապրուստ և ընդհանուր ձեր քրտնքի հաւասար աշխատանքից, մատակարարեն ձեզ հացը հաւասար իր բոլոր տեսակի պարագաներով...

Իւրաքանչիւր ազգ մտքի այդ կատարելիութիւնը իրագործելուց յետոյ պէտք է դառնայ համաշխարհային ընտանիքի մի անդամ: Այդ է պահանջում ամենքիս Աստուածը...

Ձգտիր այդ կատարելիութեան: Այդ է պահանջում և քեզ շրջապատող բնութիւնը:

Տառակոտանքով ապրել և չըմբռնել ամեն ինչ, կը նշանակէ չը զարգանալ եւ քարացնել իր միտքը...

Կանգ առ գիտութեան վերջին խօսքի առջև և ապա միահամուռ ուժով աշխատիր այդ վերջին խօսքը մեկնել: Եթէ չը կարողացար՝ մի յուսահատուիր: Քո Աստուածը յուսահատող չէ: Յուսահատութիւնը թուլութիւն է: Եթէ թուլացար ուրեմն թոյլ է եղել քո միտքը: Ուժեղացրու նրան: Նա կուժեղանայ, որովհետեւ նա ապիկար չէ...

Սիրելի գիտութիւնը, եթէ սիրեցիր, ուրեմն սիրեցիր ամենքին, որովհետեւ գիտութիւնը մարդկային ուղեղի ստեղծագործող Աստուծոյ արդիւնքն է...

Եթէ սիրեցիր միւս քեզ նմաններին, ուրեմն սիրեցիր և քո Աստուծոյ, որը մշտական հանուր մարդկութեան համար ճշմարտութեան անսայթաք ուղիներ է որոնում, ազատելու ամենքիդ դժոգքից:

Քո Աստուածը անմահ է. նա քո մէջն է. Ուրեմն դու էլ ես անմահ: Եթէ դու մեռար մի սարսիլ, որ քո հոգին դժոխք կամ արքայութիւն կերթայ: Գիտութիւնը տքնում է որ երկրի արքայութեան մէջ դու մշտնջենական լինիս: Քո Աստուածը աշխատում է քեզ վերանորոգել, ինչպէս փշրած ժամացոյցին հոգի է ապրիս ժամագործը...

Քո հոգին՝ քո միտքն է: Միտքն անմահ է եւ նա Աստուած է:

Մի արտասուիր, որ դու չես արժանանալ գիտութեան այդ հրաշքին: Ի՞նչ դարձեալ անմահ ես թէև քո մարմինը մտաւ սե հողը, որովհետեւ քո միտքը մնաց այստեղ:

Եւ ինչպէ՞ս կարող է մեռնել նա: Նա կապրէ յաւիտեան, քանի որ դու բեղմնաւորուել գիտես...

Կը գայ ժամանակ, գուցէ քո գոյութիւնը մոռացւի, բայց քո թողած միտքը երբեք չի մեռնիլ...

Եւ դու կարող ես չըմբռնել, եթէ մտածել իմանաս... Բայց մտածելը քո պարտքն է...

Մի մտածիր, միայն քեզ համար. այդպէս մտածում են և անասունները: Այդպիսով դու կը մեռնես: Ապրիր եւ ուրիշի համար. դու չես մ'նոնիլ...

Եթէ դու տգէտ ես, ուրեմն ղժռախտ ես եւ անաստաւած... Իսկ անաստաւածները մարդիկ չեն:

Գնահ, մտածել սովորիր տաճարում և ոչ թէ աղօթիր... Գո Աստուածը մտածել է հրամայում:

Աղօթել, նշանակում է բթանալ և ծուլանալ... Աղօթել, կընշանակէ վստահ չըլինել իր վրայ: Յոյսդ դիր քեզ վրայ և գիտութեան տաճարում թոյլ տուր քո Աստծուն թռիչքներ գործել ու դու չես մեռնիր: Նա կապրեցնէ քեզ:

Ամեն մի չարիք առաջ է գալիս Աստուած չըգիտակցելուց քո մէջ: Եթէ ճանաչեցիր քո Աստծուն, իմացիր, երբէք չարիք չես նիւթիլ, որովհետեւ քո Աստուածը չար չէ: Նա միմիայն հանուր բարիքի է ձգտում...

Աստուածը մէկ է. ուրեմն դուք ամենքդ էլ մէկ էք. և չըկայ ձեր մէջ խտրութիւն և անհաւասարութիւն: Իսկ եթէ այդ դու ըստ երեւութիւն նկատում ես, այդ նշանակում է քո միտքը չէ կատարելագործւում...

Մարդիկ չըպէտք է լինին կուշտ ու քաղցած, իսկ եթէ այդպէս էք, ուրեմն տգէտ էք— անաստաւած... Էլ մի բողոքիր, որովհետեւ դու ինքդ ես ստեղծում այդ անհաւասարութիւնը անասուն մնալով:

Մէկը դիզում է գանձ. ուրեմն նա ունի առաւելութիւններ. և նրա առաւելութիւնների աղբիւրը քո ազիտութիւնն է:

Դուք չըպէտք է շահագործէք իրար: Ով որ

շահագործում է, ուրեմն նա իր Աստծուն է շահագործում... Ուրեմն նա ազնիւ չէ, ուրեմն նա անաստաւած է:

Շահագործիր բնութիւնը. այդ պէտք է լինի քո միակ նպատակը:

Անասուններն են իրարից ուժի օրէնքով խլում մէկի ունեցածը: Եթէ դու էլ այդպէս ես, ուրեմն դու քարացրել ես քո միտքը— Աստծուն... Ուրեմն դու անասուն ես:

Գիտութիւնը չըպէտք է սովորել մակերեւոյթաբար: Հակառակ դէպքում, դու կը մեռնես. բայց քո կոչումն է չը մեռնել...

Ձգտիր մտքի կատարելութեան և դու չես ապրիլ անհաւասար:

Կատարեալ մարդը փշրանք չէ թափում իր Աստուծոյ առաջ: Բոլորն այդ փշրանքներից օգտւում են հաւասար:

Եթէ դու քաղցած ես և կարիքն ստիպում է քեզ գողանալ, կողոպտել նոյն իսկ քեզ նմանին սպանել ապրելու համար, նշանակում է, դու մարդ չես այլ մի գազան և դու անպատւել ես քո Աստծուն թողնելով նրան միշտ սաղմային գրութեան մէջ:

Եթէ ամենքդ իւրացնէիք մարդկային մտքի կատարելութիւնները, ոչ մի անհատ չի մնալ քաղցած և մեռնիլ անաստաւած...

Եթէ միտքդ քարանայ, էլ ինչով կարող ես Աստուած ունենալ:

Ուղարկիր զաւակիդ գիտութեան տաճարը,

որ նա ճանաչի իր գանգուժ ապրող անմահ Աստուծուն և երբ դրանց թիւը լէզէօն կը դառնայ, այն ժամանակ աստուծալաշտութիւնը ամենքիդ համար կը դառնայ պարտադիր և այդպիսի անհատներից կազմած ազգերը կապրին կուշտ և հաւասար...

Իւրաքանչիւր համայնք, ժողովուրդ, ազգ պէտք է ունենայ աղօթելու տաճարներ, ոչ թէ մօմ վառելու կամ խունկ ծխելու համար, այլ մարդկային մտքի կատարելիութիւնները իւրացնելու, առաջադիմելու և մարմնացնելու իր մէջ այն Աստծուն որին խելահաս և հանճարաւոր մարդիկ փառաբանում են վաղուց:

Դու, մօմ ես վառում, խունկ ծխում և երկրպագում աներևոյթ ուժին և քո փրկութիւնը նրանից հայցում,—նշանակում է, դու խնկարկում ես քո տգիտութիւնը՝ քո անասուն վիճակը:

Բոլոր ազգերի նախնիքները աղօթել են դահազան կողքերին, ուրեմն նրանք խարխափելիս են եղել մտքի քարացած խաւարի մէջ և ամեն ինչ յուսացել նախախնամութիւնից, աներևոյթ ուժից, չը հասկանալով, որ վերջինս հէնց իւրեանց մէջն է: Երբէք ձեզ այդ կուռքերը չեն հասցնելու կատարելիութեան—Աստուծալաշտութեան, այլ աւելի են խրամատելու մարդկութիւնը և սոսկալի անհաւասարութիւններ ծնելու...

Երբէք մի յուսալ, որ հացը վերեւից կտանաս... Գոյութեանդ համար քո միտքն է ուղիներ սրոնում:

Ամենքդ պէտք է այդ ուղին որոնէք, և միահամուռ ոյժով ստամոքսի պահանջը հաւասարութեան մէջ դնելով, ձգտէք բնութեան գաղտնիքի մէջ թափանցելու, որովհետեւ այդ է մարդու կոչումը:

Գոյութեան կռիւն է, հացի խնդիրը, որ մարդկանց բաժանել է սոսկալի խրամատներով և ծնել սարսափելի անհաւասարութիւններ: Եթէ մարդիկ միմիայն ապրել կարողանային օդով, այն ժամանակ ամենքդ կը լինէիք արքայութեան մէջ:

Հացի խնդիրն է քեզ անասնական վիճակին հասցնողը: Քո այդ սնունդը ձեռք կը բերես այն ժամանակ, երբ կը գիտակցես քո մէջ Աստուծո...

Եւ այդ սնունդը ամենքիդ համար կը դառնայ ձրի, երբ ձեր մտքի գծած ուղիով դուք այդ կստեղծէք հաւասար աշխատանքից անխափ:

Գոյութեան կռիւը մինչև այժմ՝ սրբագործւել է ոյժի իրաւունքով—Փիղիքական և մտաւորական... Առաջինից օգտւել են անասուն մարդիկ, իսկ երկրորդից անազնիւ մարդիկ:

Եւ այդպիսով ողջ մարդկութիւնը դարձել է վիժլաճքի զանգւած և խաչել, այրել ու ծաղրել հզօր մտքի այն մարգարէներին, որոնք համարձակւել են վրդովել այդ զանգւածի նեխող ճահիճը...

Բայց միթէ այդ է մարդու կոչումը... Բոլորովին. նա պէտք է բնութեան գաղտնիքները մերկացնի և մարդու անհրաժեշտ պիտոյքները ստեղ-

ծագործելով բնական ուժերից աշխատանքի և սպառողութեան հաւասար սկզբունքով՝ և ապրէ, որպէս մարդ կատարեալ...

Եթէ կատարելագործւելով գիտակցեցիր քո մէջ հզօր Աստծուն, ուրեմն դու մարդ ես կատարեալ: Իսկ եթէ դու կատարեալ ես, երբէք քեզ նմաններին չես յօշոտիլ, որովհետեւ ոչ ոք չի յօշոտում իր Աստծուն...

Բայց բոլորը միակերպ չեն կարող մտածել և ճանաչիլ մտքի Աստծուն: Ուստի գլուխ կը բարձրացնի չարիքը: Չարին յաղթելը դժւար չէ, քանի որ ձեր մէջ կը լինեն աստուածամանազ մարդիկ:

Ընտրեցէք մարդկային մտքի կատարելութիւնը մարմնացնող այդ ձեր եղբայրներին ողջ երկրագնդի ցեղերից, ոչ թէ իշխելու՝ այլ չարիքի առաջն առնելու համար:

Նրանք կանեն Աստուածահաճոյ գործ և դուք կը տեսնէք, որ չէք սխալւել, երբ նրանք ձեզ ցոյց կը տան կեանքի ուղիդ ճանապարհը ներշնչելով մտքի-Աստուծուց...

Նրանք ողջ երկրագունդը կը ծածկեն հսկայ տաճարների շինութիւնների և բնակարանների ցանցով, ուր իւրաքանչիւր անհատ կապրէ ազատ ու անկախ:

Ձը պէտք է լինեն փոքրեր ու մեծեր, որովհետեւ ամենքիդ մէջ Աստուած է բնակւում:

Իւրաքանչիւր ոք պէտք է յարգէ միւսի գոյութիւնը, հակառակ դէպքում անարգում ես քո

Աստծուն: Չէ որ նա ամենքիդ մէջն է:

Դուք չը պէտք է շահագործէք իրար, այլ ձեր հզօր մտքի թռիչքներով ծառայեցնէք ձեզ բնութեան անսպառ ուժերը...

Եթէ հասաք այդ կատարելութեան, կանհետանան ձեր միջից բոլոր դասակարգերն ու անհաւասարութիւնները և ձեր գոյութիւնը չէք մոռալ փոխադարձ սիրուց, այլ մարդկային մտքի թռիչքների կատարելութիւնը ուսումնասիրելուց...

Ամեն մի անիրաւութիւն բղխում է տգիտութիւնից... Ամեն մի չարիք ծնում է գիտութիւնը թիր լմննելուց...

Եթէ դու տգէտ ես, ուրեմն անհզօր ես Աստուած գիտակցել. իսկ եթէ Աստուած չունես, ուրեմն դու անասուն ես և պէտք է մեռնես:

Մի նախանձիր որ ուրիշն ապրում է: Նա աշխատել է ճանաչել Աստծուն: Ծանաչիր և դու: և դու չես մեռնիլ, որովհետեւ միտքն անմահ է...

Տեսնում ես՝ ամեն տեսակի չարիք ու թշուառութիւն տգիտութիւնն է ծնում: Աշխատիր չարիք չընկալել, հակառակ դէպքում՝ դու ես քո թշուառութեան աղբիւրը:

Այդ է պահանջում և մարդու գանգում բնակւող Աստուծոյ առաջին պատւիրանը:

Մի աղօթիր կոտորին, մի հաւատացիր նրան, այլ իմացիր և վստահ եղիր քո մտքի աստուածութեան:

Ֆիզիքական ուժով, թիւր մասւոր ուժով

կապրես անասունների չափ: Ապրիլը կատարեալ մտքի ուժով և դու չես մեռնիլ, կապրես յաւիտեան...

Ապրիլը և ուրիշի համար, ուրեմն ապրում ես և քեզ համար... Եթէ այդպէս արիւր, ուրեմն գոյութեան կռիւը՝ բնութեան մեքենայական սխալ ճանաչեցիր: Տքնիր ուրեմն բնութեան այդ սխալն ուղղել և ոչ թէ այդ սխալի պատճառով շահագործիր եղբօրդ, այլ շահագործիր այդ բնութիւնը յօգուտ ամենքիդ:

Հօր մտքի թռիչքը, այդ ամենակարող Աստուածը երբ գոյութեան կռիւը կը չեզոքացնի ստամոքսի պահանջած նիւթի գիւտով, միայն կը մնայ քեզ բեղմնաւորութիւնով հարատեւել կեանքը:

Կեանքն անմիտ է, երբ նրա մէջ չը կայ հարատեւութիւն: Տքնիր մտքի ուժով հարատեւ դարձնել այն և կեանքը կը դառնայ ամենքիդ համար հետաքրքիր ու մշտադալար...

Դու չես կարող չը բեղմնաւորել, որովհետեւ քո կոչումն անմահութիւնն է: Առանց բեղմնաւորութեան չը կայ անմահութիւն:

Դու պարտաւոր ես մարդկութեան անդամ տալ և դու երբէք տէրը չես քո զաւակի:

Քո զաւակն էլ պատկանում է համայն մարդկութեան, ինչպէս և դու:

Նրան խնամողն ու գաստիարակողը հասարակութիւնն է: Դու տէրն ես միայն քո բեղմնաւորութեան...

Բեղմնաւորութեան համար չի կարող լինել ոչ մի օրէնք...

Զոյգի փոխադարձ համաձայնութիւն—ահա միակ օրէնքը...

Բնական ընտրութիւնը քեզ մղում է ընտրութեան՝ որին դու սէր ես անւանում:

Մինչև այժմ բնութիւնն էր կատարելագործում քո սերունդը, քանի դու չէիր գիտակցում մտքի հօր Աստծուն:

Դու արդէն ճանաչել ես նրան, այսուհետև կատարելագործիր ինքդ՝ բեղմնաւորութեան ազատ սկզբունքով:

Բեղմնաւորութեան իրաւական տէրը դու ես, դրականը՝ հանուր մարդկութիւնը, որին դու ես պատկանում, իսկ իսկական տէրը՝ քո մտքի թռիչք—հօր Աստուածը:

Մարդկային մտքի Աստուածը գերբնական չէ: Տիեզերքում՝ ամեն ինչ բնական է: Գերբնական չը կայ ոչինչ: Գերբնականը քարացած մտքի հարազատ զաւակն է ու քոյրը թշուառութիւնների և չարիքների աղբիւրը:

Մտածիր և դու կը համոզուես քո Աստուծոյ ամենակարող ուժի մէջ:

Մտածիր ու դու նրան կը գտնես: Եթէ ճանաչեցիր նրան, ուրեմն դու մարդ ես կատարեալ: Իսկ կատարեալը՝ Աստուած է:

Նայիր դու նրան մտքի աչքերով: Կրտսեան ես այդ ստեղծագործող հանճարին: Նա քո գանգումն է: Նա քո մտքի թռիչքն է: Նա այն ստեղծող ուժն է, որ մարդկութիւնը իր գոյութեան առաջին օրից սկսել է որոնել:

Մարդու միտքը բաց տարածութիւն չէ սիրում...

Եւ մարդկային միտքը դարերի ընթացքում այդ բացը փոփոխութեան ենթարկելով, այժմ հանգել է մի աներևոյթ ուժի առաջ:

Կանցնեն դարեր... Քո միտքը նոր թռիչքներ կը գործի և կը որոշի այդ ստեղծագործող ուժը և կը գտնի այն հասարակ գաղտնիքը, որով շինւել է ողջ տիեզերքը:

Այդ քո միտքը կսկսի շինել նոր տիեզերքներ, ցոյց տալով ստեղծագործւելու պրօցէսը:

Եւ ոչ ոք չը պիտի թոյլ տայ իրան մտքի ազատութիւնը շղթայել: Եթէ շղթայում է, կը նշանակէ շղթայում է Աստծուն...

Ազատ մտածելը՝ իւրաքանչիւրի սեպուն պարտականութիւնն է և մարդկային երջանկութեան խանգարիչ խոչնդոտների տապալելն ու կործանելը՝ քո իրաւունքը:

Մտքի ստեղծագործութեան ազատութիւնն է միմիայն, որ պէտք է ծնի ստամոքսի հաւասարութիւն և բեղմնաւորութեան կատարելութիւն, ապա այն հօգը Աստծուն, որը այսուհետեւ կը գառնայ մարդկութեան երջանկութեան միակ աղբիւրը...

Եւ ազատ միտքը՝ այդ երեքն էլ կստեղծագործի և միմիայն դրանիցն էլ պէտք է բղխի մարդկային երջանկութիւնը...

Ես՝ կատարելագործող մտքի—Աստուծոյ առաքեալն եմ՝ հետեցէք իմ վարդապետութեան

և մարդկութիւնը դէպի երջանկութիւն տանող ճանապարհի վրայ կանէք առաջին քայլը և ներկայ դժողքից ազատելով կը գտնէք արքայութեան դուռը...

Քարացած միտքը ինձ կը զննչացնի, և իմ մտքի մեքենան՝ մարմինս կը մտնի սև հողի մէջ... Բայց ես յարութիւն կառնեմ ուրիշների մէջ և այդպէս անվերջ, մինչև որ երջանկութիւնը կը թագաւորէ ամեն տեղ...

—Մահ... Գոռացին ամենքը:

—Մահ, խելագարին...

Կապեցին նրան... Գնտակն ուղղեցին ճակատին: Սոսկալի տեսարան... Որոտոց... Ես արթնացայ...

—Օ, սոսկալի երազ...



... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...

... und die ...





Օտար քաղաքներից ղիմել հետեւեալ հաս-
ցելով՝ Թիֆլիս Գուտտենբերգ գրախանութ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0360019

49474

